ANNEX ON DRAFT LAWS, CONCEPT AND CURRICULA

(The draft laws)

1. The Draft law on Environmental Impact Assessment and Expertise, 2019

2. The Draft law on the Freedom of Information, 2018/2019

3. Concept on environmental education, 2018

4. Curricula of the Academy of Justice, 2018

(http://justiceacademy.am/assets/attachments/2019.dataxazneri.tarekan.tsragir.pdf?fbclid=IwAR1DWSs2OWugGbYvIAlbSUbTZ7cwlqVgVZXGdCH2wM87XMSACaRyu1iYmq0)

The Draft law on Environmental Impact Assessment and Expertise, 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների (այսուհետ՝ գնահատում), այդ թվում՝ անդրսահմանային, և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական

փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) ոլորտի հասարակական հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի գործողությունը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթուղթ մշակող, ընդունող կամ նախատեսվող գործունեություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անձանց վրա:

Հոդված 3. Գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը

1. Գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **շրջակա միջավայր՝** բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, կլիմա, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ բնապահպանական այլ հողեր, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

2) **շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝** հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

3) **անդրսահմանային ազդեցություն՝** պետության իրավազորության ներքո գտնվող տարածքում շրջակա միջավայրի վրա ազդեցություն, որը կառաջանա հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, և որի ֆիզիկական աղբյուրն ամբողջությամբ կամ մասամբ այլ պետության իրավազորության ներքո գտնվող տարածքում է.

4) **ազդակիր պետություն՝** պետություն, որն այլ պետության իրավազորության ներքո գտնվող տարածքում հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ

նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով կարող է ենթարկվել շրջակա միջավայրի վրա ազդեցության.

5) **ծագման պետություն՝** պետություն, որի իրավազորության ներքո նախատեսվում է իրականացնել հիմնադրութային փաստաթղթի դրույթները կամ նախատեսվող գործունեությունը.

6) **հիմնադրութային փաստաթուղթ՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (ռազմավարություն, հայեցակարգ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, պլան, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ կամ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների այլ փաստաթուղթ) նախագիծ կամ այդ փաստաթղթի ցանկացած փոփոխություն, որը հաստատվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ այլ իրավական ակտերով.

7) **նախատեսվող գործունեություն՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող և սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ մասերում թվարկված գործունեության տեսակների արտադրություն կամ կառուցում կամ շահագործում կամ ընդլայնում կամ սույն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում՝ վերակառուցում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ լուծարում կամ փակում կամ քանդում կամ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող նախագծային փոփոխություն.

8) **նախագծային փաստաթուղթ՝** նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նախագծային կամ ծրագրային փաստաթուղթ, և կատարվող ցանկացած փոփոխություն, որում նկարագրվում և ներկայացվում են նախատեսվող գործունեության տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները՝ սկզբից մինչև ավարտը (շինարարության փուլից մինչև փակման փուլ).

9) **ռազմավարական էկոլոգիական գնահատում (այսուհետ՝ ՌԷԳ)՝** հիմնադրութային փաստաթղթի իրականացման հետևանքով շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու առողջության վրա ազդեցությունների որոշման և գնահատման գործընթաց, որը ներառում է ՌԷԳ հաշվետվության շրջանակի որոշումը, ՌԷԳ հաշվետվության նախապատրաստումը, հանրության մասնակցության և խորհրդակցությունների անցկացման ապահովումը, հիմնադրութային փաստաթղթում ՌԷԳ հաշվետվության դրույթների, հանրային մասնակցության և խորհրդակցությունների արդյունքների հաշվի առնումը.

10) **շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում /այսուհետ՝ ՇՄԱԳ/՝** ձեռնարկողի կողմից նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության գործընթաց, որը ներառում է ՇՄԱԳ ընդգրկման ոլորտի որոշում,

ՇՄԱԳ հաշվետվության նախապատրաստում, հանրության մասնակցություն և պետական այլ մարմինների հետ խորհրդակցությունների անցկացում.

11) **փորձաքննություն՝** հիմնադրութային փաստաթղթի, ՌԷԳ հաշվետվության կամ նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության և նախագծային փաստաթղթերի, սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ դրանց փոփոխությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում դրանց թույլատրելիության վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց.

12) **պետական փորձաքննական եզրակացություն՝** հիմնադրութային փաստաթղթի դրույթների կամ նախատեսվող գործունեության թույլատրելիության վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրվող պաշտոնական փաստաթուղթ՝ համապատասխան հիմնավորումներով.

13) **լիազոր մարմին՝** սույն օրենքին համապատասխան Կառավարության լիազորած շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման մարմին.

14) **ձեռնարկող՝** փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթուղթ մշակող, կամ հաստատող կամ ընդունող, կամ ՌԷԳ իրականացման համար պատասխանատու պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ գործունեություն նախատեսող կամ պատվիրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

15) **փորձագետ՝** փորձաքննության գործընթացում լիազոր մարմնի կողմից ներգրաված իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ Կառավարության որոշմամբ փորձաքննության գործընթացում ներգրաված տեղական կամ միջազգային իրավաբանական կամ ֆիզիկական անձ,

16) **հանրություն՝** մեկ կամ մեկից ավել ֆիզիկական կամ իրավաբանական անձ, միավորում, խումբ,կազմակերպություն.

17) **ազդակիր համայնք՝** շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք.

18) **շահագրգիռ հանրություն՝** նախատեսվող գործունեության և հիմնադրութային փաստաթղթի իրականացման ազդեցությունը կամ հավանական ազդեցությունը կրող, կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, միավորում, խումբ, կազմակերպություն.

19) **գործընթացի մասնակիցներ՝** պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին.

20) **հայտ՝** սույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված, նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ լուծարում կամ փակում կամ քանդում կամ նախագծային փոփոխություն իրականացնելուց առաջ ձեռնարկողի կողմից լիազոր մարմին ներկայացվող տեղեկությունների փաթեթ.

21) **հաշվետվություն՝** ՌԷԳ կամ ՇՄԱԳ արդյունքներն ամփոփող փաստաթուղթ.

22) **բնապահպանական կառավարման պլան՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի փոխհատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության շահագործման և փակման փուլ, ռիսկային և արտակարգ իրավիճակներ). դրանց հիմնավորվածությունն ու բավարարությունը, իրականացման ժամանակացույցը, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ.

23) **շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիր՝** հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում և դրանից հետո շրջակա միջավայրի վրա ներգործության դիտարկմանը, հետնախագծային վերլուծությանը, փորձաքննական եզրակացության և Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարմանը կամ արտադրական հսկմանը (ինքնահսկմանը) ուղղված գործողությունների ամբողջություն:

Հոդված 5. Գնահատման և փորձաքննության հիմնադրույթները և սկզբունքները

1. Գնահատումը և փորձաքննությունն ելնում են՝

1) առողջության, բնականոն ապրելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքից.

2) բնական պաշարների արդյունավետ, համալիր և ողջամիտ օգտագործման պահանջներից.

3) էկոլոգիական համակարգերի հավասարակշռության և կենդանական ու բուսական աշխարհի պահպանման անհրաժեշտությունից՝ նկատի ունենալով ներկա և ապագա սերունդների շահերը.

4) շրջակա միջավայրին և մարդու առողջությանը հասցվող վնասի հատուցելիության ճանաչումից:

2. Գնահատման և փորձաքննության սկզբունքներն են՝

1) նախատեսվող գործունեության և հիմնադրութային փաստաթղթի գործողության արդյունքում շրջակա միջավայրի վրա հավանական ազդեցությունը.

2) գնահատման ընթացքում ազդեցությունների, ներառյալ՝ անդրսահմանային, դիտարկումների համալիրությունը.

3) նախատեսվող գործունեության իրականացման այլընտրանքային, այդ թվում՝ զրոյական (գործունեության չիրականացում) տարբերակների դիտարկելիությունը.

4) հաշվետվությունների լիարժեքության, հավաստիության և գիտական հիմնավորվածության ապահովումը.

5) փորձաքննական եզրակացության հիմնավորվածության, օրինականության, օբյեկտիվության ապահովումը.

6) գնահատման և փորձաքննության գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

7) գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության մասնակցության ապահովումը.

8) ձեռնարկողի կողմից շրջակա միջավայրին հասցված վնասի հատուցելիությունը:

3. Նախատեսվող գործունեության կամ հիմնադրութային փաստաթղթի գործողության հետևանքով մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա հնարավոր ռիսկի դեպքում պատասխանատվությունը կրում է ձեռնարկողը, եթե տվյալ գործունեության վնասակարության բացակայությունը գիտականորեն հիմնավորված չէ:

Հոդված 6. Գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները

1. Գնահատման նպատակն է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

2. Փորձաքննության նպատակն է գնահատման հավաստիության ստուգումը, հիմնադրութային փաստաթղթի դրույթների կամ նախատեսվող գործունեության իրականացման թույլատրելիության որոշումը:

3. Գնահատման և փորձաքննության խնդիրներն են՝

1) էկոլոգիական անվտանգության պահանջների և շրջակա միջավայրի պահպանության սահմանափակումների հիման վրա կայուն զարգացմանը նպաստելը.

2) հիմնադրութային փաստաթղթի դրույթների և նախատեսվող գործունեության դրական ազդեցությունների պահպանման, վնասակար ազդեցությունների ու դրանց հետևանքների կանխարգելման, նվազեցման կամ բացառման ապահովումը.

3) արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովումը:

Հոդված 7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող գործողությունները, շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը

1. Գնահատման և փորձաքննության իրականացման ընթացքում դիտարկվում են՝

1) մթնոլորտային օդի որակական և քանակական ցուցանիշները, մթնոլորտն աղտոտող նյութերը, աղտոտվածության մակարդակը.

2) մակերևութային և ստորերկրյա ջրերը, դրանց դասը, հոսքի ռեժիմը, որակական և քանակական ցուցանիշները, ջրօգտագործումը, ջրահեռացումը, ջրային համակարգը կամ դրա առանձին մասերը և այլ բնութագրերը.

3) հողը՝ նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, կարգը, որակը, վիճակը, կազմը, աղտոտվածությունը, դեգրադացիան, բերրի շերտի օգտագործումը, հողերի այլ բնութագրեր.

4) ռելիեֆը, երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոները, ընդերքի պահպանությանն ու օգտագործմանը վերաբերող այլ բնութագրեր.

5) լանդշաֆտը, բնության հատուկ պահպանվող տարածքները կամ բնապահպանական այլ հողերը, բնակավայրերի կանաչ գոտիները, կենդանիների միգրացիոն ուղիները և բնադրավայրերը.

6) բուսական ու կենդանական աշխարհը, դրանց տեսակային կազմը, բնակության միջավայրերը, աճելավայրերը, բուսական ու կենդանական աշխարհի օգտագործումը, կենդանի վերափոխված օրգանիզմների գործածությունը, ոչ տեղական՝ ինվազիվ բուսական և կենդանական տեսակների, Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում կամ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված կենդանիների կամ բույսերի առկայությունը.

7) անտառները՝ գործառնական նշանակությունը, տեսակային կազմը, վիճակը և անտառի այլ բնութագրեր.

8) պատմության և մշակույթի հուշարձանները, կառույցները, ենթակառուցվածքները, տրանսպորտային միջոցներով ծանրաբեռնվածությունը.

9) թափոնի կազմը և դրա բաղադրիչների թունունակությունը, թափոնների գործածությունը, վտանգավոր հատկությունները, վտանգավորության աստիճանը, թափոնի քանակությունը, ծագումը (ըստ տեխնոլոգիական կանոնակարգի).

10) ֆիզիկական ազդեցությունները՝ աղմուկը, թրթռումները (վիբրացիան), իոնացնող և ոչ իոնացնող ճառագայթումները.

11) ազդեցությունները կլիմայի վրա.

12) ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները.

13) սոցիալական գործոնները, ժողովրդագրական կազմն ու բնակչությունը.

14) արտակարգ իրավիճակների հավանականությունը:

Գ Լ ՈՒ Խ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 8. Գնահատման և փորձաքննության գործընթացների պետական կառավարման մարմինները

1. Գնահատման և փորձաքննության գործընթացների պետական կառավարումն իրականացնում են Կառավարությունը և լիազոր մարմինը:

Հոդված 9. Գնահատման և փորձաքննության գործընթացներում Կառավարության լիազորությունները

1. Գնահատման և փորձաքննության գործընթացներում Կառավարության լիազորություններն են՝

1) գնահատման և փորձաքննության գործընթացներին վերաբերող քաղաքականության իրականացման ապահովումը.

2) իր իրավասության սահմաններում գնահատման և փորձաքննության գործընթացները կարգավորող իրավական ակտերի ընդունումը.

3) անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության փորձաքննական եզրակացության հաստատումը.

4) օրենքով նախատեսված դեպքերում փորձագետ(ներ) ներգրավելը:

Հոդված 10. Փորձաքննության գործընթացում լիազոր մարմնի լիազորությունները

1. Փորձաքննության գործընթացում լիազոր մարմնի լիազորություններն են՝

1) փորձաքննության գործընթացին վերաբերող քաղաքականության մշակումն ու իր իրավասության սահմաններում դրա իրականացումը.

2) փորձաքննության գործընթացը կարգավորող իրավական ակտերի մշակումը.

3) իր իրավասության սահմաններում փորձաքննության գործընթացին վերաբերող միջազգային համագործակցության իրականացումը.

4) անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության փորձաքննական եզրակացության նախագծի նախապատրաստումը.

5) սույն օրենքով սահմանված հիմքերով ու կարգով՝ անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող

գործունեության փորձաքննական եզրակացության կասեցման կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծը Կառավարության հաստատմանը ներկայացնելը.

6) փորձաքննություն իրականացնելը, փորձաքննական եզրակացության կազմումն ու տրամադրումը.

7) նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցումը կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինումը կամ վերապրոֆիլավորումը կամ կոնսերվացումը կամ տեղափոխումը կամ լուծարումը կամ փակումը կամ քանդումը կամ նախագծային փոփոխությունը շրջակա միջավայրի վրաազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա լինելը որոշելը.

8) փորձաքննության գործընթացում պայմանագրային հիմունքներով փորձագետներ ներգրավելը.

9) առնչվող մարմինների հետ անհրաժեշտության դեպքում հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության համաձայնեցնելը.

10) հանրային լսումներում իր ներկայացուցչի մասնակցությունն ապահովելը.

11) անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության փորձաքննության գործընթացում փորձագետների ներգրավումը.

12) սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելը.

13) սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով փորձաքննության գործընթացում հանրության ծանուցման և մասնակցության հնարավորության ապահովումը.

14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը:

Հոդված 11. Գնահատման և փորձաքննության գործընթացում տարածքային կառավարման մարմինների լիազորությունները

1. Գնահատման և փորձաքննության գործընթացում տարածքային կառավարման մարմինների լիազորություններն են՝

1) տարածքին առնչվող հիմնադրութային փաստաթղթի դրույթների և (կամ) նախատեսվող գործունեության վերաբերյալ կարծիքի տրամադրում, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ.

2) իր լիազորության սահմաններում՝ սույն օրենքով սահմանված կարգով հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության, դրանց ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ

ծանուցման, հանրային լսումների կազմակերպման և հանրության մասնակցության ապահովում.

3) ձեռնարկողի պահանջով տարածքին առնչվող գործող հիմնադրութային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում.

4) գնահատման գործընթացներում ձեռնարկողին համապատասխան խորհրդատվության, ինչպես նաև ազդեցության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ ցանկացած այլ տեղեկատվության տրամադրում:

Հոդված 12. Գնահատման և փորձաքննության գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

1. Գնահատման և փորձաքննության ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն են՝

1) համայնքին առնչվող հիմնադրութային փաստաթղթի դրույթների և (կամ) նախատեսվող գործունեության վերաբերյալ նախնական համաձայնության տրամադրում, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ.

2) իր լիազորության սահմաններում սույն օրենքով սահմանված կարգով հիմնադրութային փաստաթղթի և (կամ) նախատեսվող գործունեության, դրանց ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ ծանուցման, հանրային լսումների կազմակերպման և հանրության մասնակցության ապահովում և հանրային լսումների ժամանակ կարծիքի տրամադրում.

3) ձեռնարկողի պահանջով տարածքին առնչվող գործող հիմնադրութային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում.

4) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներում ձեռնարկողին համապատասխան խորհրդատվության, ինչպես նաև ազդեցության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ ցանկացած այլ տեղեկատվության տրամադրում:

ԳԼՈՒԽ 3

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդված 13. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության տեսակները

1. Գնահատման և փորձաքննության ենթակա են սույն հոդվածի 3-4-րդ և 6-9-րդ մասերով սահմանված նախատեսվող գործունեության տեսակների նախագծային փաստաթղթերը:

2. Գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ Ա, Բ՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի:

3. Ա կատեգորիան ներառում է.

1) էներգետիկայի բնագավառում.

ա. ատոմակայաններ կամ ատոմային ռեակտորով աշխատող այլ կառույցներ,

բ. մշակված միջուկային վառելիքի պահեստավորման և հերմետիկացման կայանքներ,

գ. միջուկային վառելիքի հարստացման արտադրություն,

դ. ջերմային էլեկտրակայաններ,

ե. 30 ՄՎտ և ավելի ջերմային հզորությամբ տաք ջրի կամ գոլորշու արտադրության կայանքներ,

զ. 1 ՄՎտ և ավելի հզորությամբ հիդրոէլեկտրակայաններ.

է. գազիֆիկացիայի և գազի հեղուկացման կայանքներ,

ը.կոքսային վառարաններ,

թ. ճառագայթահարված միջուկային վառելիքի կամ բարձր ռադիոակտիվություն ունեցող թափոնների վերամշակում,

ժ. երկրաջերմային ջրերից էներգիայի արտադրություն՝ 8 ՄՎտ և ավելի հզորությամբ.

2) ընդերքօգտագործման բնագավառում.

ա. երկրաբանական ուսումնասիրություններ՝ 1000 գծամետրից ավելի ստորերկրյա լեռնային փորվածքներով կամ 1000 գծամետր խորությունը գերազանցող հորատանցքի հորատման դեպքում,

բ. մետաղական, այդ թվում՝ ռադիոակտիվ օգտակար հանածոյի արդյունահանում կամ հանքաքարի կամ հանքանյութի վերամշակում կամ արդյունահանման համալիրի կառուցում,

գ. նավթի կամ գազի արդյունահանում կամ հում նավթի կամ բնական գազի վերամշակում,

դ. նավթի կամ գազի կամ արտադրության թափոնների կամ թունավոր կամ ռադիոակտիվ նյութերի պահման համար ստորերկրյա կառույցների ստեղծում,

ե. ստորերկրյա տրանսպորտային ուղիների կամ կառույցների ստեղծում,

զ. մետաղական օգտակար հանածոների հանքարդյունահանման համալիրի վերջնական փակում,

է. ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում կամ հանքանյութի վերամշակում,

ը. հանքային ջրերի հանքավայրերի շահագործում՝ ձեռնարկատիրական նպատակով,

թ. քաղցրահամ ջրերի հանքավայրերի շահագործում՝ ձեռնարկատիրական նպատակներով,

3) քիմիական արդյունաբերության բնագավառում.

ա. կաուչուկների կամ ռետինատեխնիկական իրերի արտադրություն կամ վերամշակում,

բ. նավթի կամ նավթամթերքների արտադրություն կամ վերամշակում,

գ. մազութի արտադրություն,

դ. պայթուցիկների արտադրություն,

ե. անօրգանական թթուների կամ ալկալիների կամ անօրգանական այլ նյութերի կամ միացությունների արտադրություն,

զ. օրգանական կամ անօրգանական նյութերի կամ դրանց խառնուրդների արտադրություն կամ վերամշակում,

է. պեստիցիդների կամ ագրոքիմիկատների արտադրություն,

ը. կենցաղային քիմիայի (լվացող, մաքրող կամ այլ նյութերի) արտադրություն՝ ամսական 50 տոննա և ավելի.

թ. քիմիական արտադրության կայանքներ, որտեղ քիմիական կամ կենսաբանական գործընթացները օգտագործվում են կերերի սպիտակուցային հավելուկների, ֆերմենտների և այլ սպիտակուցային նյութերի արտադրության համար.

ժ. կայանքներ՝ ածխածնի (բնական կոքսի) կամ էլեկտրագրաֆիտի արտադրության համար՝ այրման կամ գրաֆիտիզացիայի միջոցով.

ժա. գազային կամ նավթային կամ նավթաքիմիական կամ քիմիական նյութերի ստորգետնյա 5 000 տոննա և ավելի տարողության պահեստներ.

4) դեղագործական արտադրության բնագավառում.

ա. դեղանյութերի արդյունաբերական արտադրություն.

5) մետաղների արտադրության և վերամշակման բնագավառում.

ա. մետաղական հանքանյութերի (ներառյալ՝ սուլֆիդային հանքանյութերի) թրծում և ագլոմերացիա,

բ. հանքանյութից կամ խտանյութից կամ երկրորդային հումքային նյութերից գունավոր, ազնիվ, հազվագյուտ, սև մետաղների կամ դրանց համաձուլվածքների արտադրություն կամ վերամշակում,

գ. գունավոր մետաղների մշակում, ներառյալ՝ լեգիրացումը, արտադրատեսակների ռեկուպերացիան (զտում, ձուլածագործական արտադրություն և այլն),

դ. վերամշակված թուջի կամ պողպատի արտադրություն (առաջնային կամ երկրորդային ձուլում), ներառյալ՝ անընդհատ հոսքով ձուլումը, որը գերազանցում է ժամում 2.5 տոննա հզորությունը,

ե. մետաղների կամ պլաստիկ նյութերի մակերեսային մշակում՝ էլեկտրոլիտիկ կամ քիմիական պրոցեսների օգտագործմամբ՝ 30 խմ և ավելի ծավալով ավազաններում.

6) թափոնների գործածության բնագավառում.

ա. վտանգավոր թափոնների հավաքում կամ պահում կամ օգտահանում կամ մշակում կամ վերամշակում կամ վնասազերծում կամ թաղում կամ տեղադրում.

բ. ընդերքօգտագործման վտանգավոր թափոնների վերամշակում.

գ. թափոնների տեղադրման օբյեկտների կառուցում

7) շինանյութի արդյունաբերության բնագավառում.

ա. ցեմենտի կամ կլինկերի կամ կրի կամ գաջի արտադրություն՝ օրական 100 տոննա և ավելի,

բ. հանքային նյութերի հալեցում՝ 20 տոննա և ավելի, ներառյալ՝ հանքային մանրաթելի արտադրությունը,

գ. թրծման միջոցով կերամիկական արտադրատեսակների, այդ թվում՝ տանիքի կղմինդրի կամ աղյուսի կամ հրակայուն աղյուսի կամ կերամիկական սալիկի կամ քարե կերամիկայի կամ ճենապակե իրերի արտադրություն՝ օրական 75 տոննա և ավելի,

դ. ապակու կամ ապակաթելի կամ ապակյա իրերի արտադրություն՝ օրական 20 տոննա և ավելի,

ե. ասֆալտ բետոնի արտադրություն.

8) թեթև արդյունաբերության բնագավառում.

ա. բնական կամ արհեստական (այդ թվում՝ սինթետիկ) կաշվի արտադրություն կամ քիմիական վերամշակում,

բ. կայանքներ՝ մանրաթելի կամ տեքստիլի նախնական վերամշակման (այնպիսի գործողություններ, ինչպիսիք են լվացումը, սպիտակեցումը, մերսերիզացիան) կամ ներկման համար, որտեղ մշակվող նյութերի ծավալը գերազանցում է օրական 10 տոննան.

9) սանիտարատեխնիկական կառուցվածքների բնագավառում.

ա. գերեզմանոցներ կամ դիակիզարաններ կամ դիահերձարաններ, պաթոլոգիաանատոմիկներ կամ դիարաններ,

բ. կենդանիների դիակիզում կամ թաղում կամ սպանդանոցներ՝ օրական 500 գլուխ և ավելի.

10) ենթակառույցների բնագավառում.

ա. օդանավակայաններ՝ 2100 մ թռիչքուղու երկարությամբ և ավելի,

բ. էլեկտրահաղորդման գծեր՝ 15 կմ և ավել երկարությամբ, 220 կՎ և ավելի լարման,

գ. չորս և ավելի երթևեկելի գոտի ունեցող նոր ճանապարհների կառուցում կամ վերակառուցում կամ երկուսից ոչ ավելի երթևեկելի գոտի ունեցող ճանապարհների

ընդլայնում չորս և ավելի երթևեկելի գոտի ստանալու նպատակով, եթե համապատասխան հատվածն ունի 10 կմ և ավելի անընդհատ երկարություն.

դ. 500 մետր և ավելի երկարությամբ թունելների կամ մետրոպոլիտենի կամ երկաթուղիների կառուցում կամ 25 տոննա և ավել բեռնատարողությամբ կամուրջների կառուցում,

ե. 300 մմ և ավելի տրամագծով, 20 կմ և ավելի երկարությամբ գազի կամ նավթի կամ քիմիական նյութերի խողովակաշարեր,

զ. գերհզոր հաղորդող ռադիոտեխնիկական օբյեկտների տեղակայում: Սույն օրենքի իմաստով գերհզոր հաղորդող ռադիոտեխնիկական օբյեկտներ են համարվում այնպիսի օբյեկտները, որոնց տեղադրված ալեհավաքի ուղղորդված գործողության գործակիցը 5-ից ավելի է կամ առավելագույն հզորությունը գերազանցում է ներքոհիշյալ մակարդակները՝

900 Վտ՝ 30 կՀց-3 ՄՀց հաճախականության տիրույթում,

500 Վտ՝ 3-30 ՄՀց հաճախականության տիրույթում,

25 Վտ՝ 30 ՄՀց-300 ԳՀց հաճախականության տիրույթում,

ը. 300 մմ և ավելի տրամագծով և 1 կմ և ավելի երկարությամբ խողովակաշարեր՝ օպտիկամանրաթելային մալուխների համար.

11) ջրային տնտեսության բնագավառում.

ա. ջրամբարներ կամ արհեստական լճեր կամ ջրավազաններ՝ 500 000 խմ և ավելի,

բ. կոյուղաջրերի կամ կեղտաջրերի մաքրման կայաններ՝ 50 000 և ավելի բնակչի համարժեք հզորությամբ,

գ. արտադրական կեղտաջրերի մաքրման կայաններ,

դ. ենթակառուցվածքների կառուցում՝ վարարումներից, ճահճացումից պաշտպանելու նպատակով.

ե. քաղցրահամ ստորերկրյա ջրերի օգտագործում՝ ձեռնարկատիրական նպատակով (1 հորի համար 100լիտր/վայրկյան և ավել կամ 250մմ և ավել տրամագծով),

12) քաղաքաշինության բնագավառում.

ա. հակասողանքային կամ հակասահքային կամ հակասելավային միջոցառումներ՝ 10 հա և ավելի տարածքների համար.

13) գյուղատնտեսության բնագավառում.

ա. կաթի վերամշակման, կաթնամթերքի արտադրության գործարաններ՝ օրական 200 տոննա և ավելի արտադրական հզորությամբ,

բ. ձկնաբուծական տնտեսություններ՝ 400 լիտր/վայրկյան և ավելի ջրառի դեպքում (մեկ տնտեսության համար),

գ. թռչնաբուծական՝ 40000 առանձնյակից ավելի,

դ. խոզաբուծական՝ 2000 գլուխ և ավելի.

14) փայտի և թղթի արդյունաբերության բնագավառում.

ա. թղթի արտադրության համար փայտանյութի, թղթի կամ ստվարաթղթի արտադրություն՝ օրական 20 տոննա և ավելի ծավալով.

բ. փայտանյութից ցելյուլոզի կամ նման մանրաթելային նյութերի արտադրություն.

15) սննդի արդյունաբերության բնագավառում.

ա. համակցված կերերի արտադրություն՝ օրական 50 տոննա և ավելի,

բ. ծխախոտի արտադրություն կամ վերամշակում՝ օրական 0.5 տոննա և ավելի.

4. Բ կատեգորիան ներառում է.

1) էներգետիկայի բնագավառում գործունեության հետևյալ տեսակները կամ արտադրական միավորները կամ դրանց բոլոր կառույցները կամ ենթակառույցները.

ա. կենսագազի կամ կենսագազով էներգիայի արտադրություն՝ 1 ՄՎտ և ավելի հզորությամբ,

բ. հիդրոէլեկտրակայաններ՝ մինչև 1 ՄՎտ հզորությամբ,

գ. հողմաէլեկտրակայաններ՝ 8 ՄՎտ և ավելի ընդհանուր հզորության, արևային էլեկտրակայաններ՝ 5 հա և ավելի տարածք զբաղեցնող.

2) ընդերքօգտագործման բնագավառում.

ա. երկրաբանական ուսումնասիրություններ.

բ. ոչ մետաղական օգտակար հանածոների հանքերի վերջնական փակում,

գ. ընդերքօգտագործման ոչ վտանգավոր թափոնների վերամշակում,

դ. ստորերկրյա ջրերի հանքավայրերի վերջնական փակում,

3) ջրային տնտեսության բնագավառում.

ա. ջրամբարներ կամ արհեստական լճեր կամ ջրավազաններ՝ 100 000-ից մինչև 500.000 խմ

բ. 300 մմ և ավելի տրամագծով և 1 կմ և ավելի երկարությամբ ջրամատակարարման կամ ջրահեռացման համակարգեր

գ. կոյուղաջրերի կամ կեղտաջրերի մաքրման կայաններ՝ 3 000-ից մինչև 50 000 բնակչի համարժեք հզորությամբ.

4) գյուղատնտեսության բնագավառում.

ա. ձկնաբուծական տնտեսություններ՝ տարեկան 100 տոննա և ավելի (ջրօգտագործման և ջրահեռացման նորմավորման հիման վրա), եթե տնտեսության ջրօգտագործումը չի գերազանցում 400 լիտր/վայրկյանը,

բ. ոչխարաբուծական տնտեսություններ՝ 500 գլուխ և ավելի,

գ. անասնաբուծական (խոշոր եղջերավոր) տնտեսություններ՝ 1000 գլուխ և ավելի,

դ. թռչնաբուծական՝ 10000-40000 առանձնյակ.

5) ենթակառույցների բնագավառում.

ա. էլեկտրահաղորդման գծեր՝ 110 կՎ–ից մինչև 220կՎ լարման,

բ. բենզալցակայաններ կամ գազալցակայաններ՝ 5 խմ և ավելի տարողությամբ,

գ. ճանապարհներ 5 կմ և ավելի,

6) սննդի արդյունաբերության բնագավառում.

ա. մսի կամ մսամթերքի արտադրություն (պատրաստի արտադրանք)՝ օրական 50 տոննա և ավելի,

բ. շաքարի կամ շաքարավազի արտադրություն՝ օրական 10 տոննա և ավելի,

գ. ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն՝ օրական 10000 դեկալիտր և ավելի,

դ. գարեջրի արտադրություն՝ օրական 10000 դեկալիտր և ավելի,

ե. գինու և (կամ) շամպայն գինիների և (կամ) լիկյորի և (կամ) օղու և (կամ) կոնյակի արտադրություն՝ օրական 1000 դեկալիտր և ավելի,

զ. կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրություն՝ օրական 100-ից մինչև 200 տոննա արտադրական հզորությամբ,

է. կենդանական կամ բուսական յուղերի ու ճարպի արտադրություն՝ օրական 5 տոննա և ավելի,

ը. մարգարինի արտադրություն՝ օրական 1 տոննա և ավելի.

7) քաղաքաշինության բնագավառում.

ա. քաղաքաշինական կառույցներ՝ 1500 քմ-ից ավելի կառուցապատման կամ բարեկարգման կամ կառուցապատման և բարեկարգման մակերեսով.

8) ռեկրեացիայի և զբոսաշրջության բնագավառներում.

ա. զբոսայգիներ կամ պուրակներ կամ անտառապուրակներ, հանգստի գոտիներ,

բ. ճոպանուղիներ կամ զիփլայն կամ դահուկուղի,

9) ջրային տնտեսության կամ հողերի մելիորացիայի բնագավառում.

ա. աղակալված հողերի աղազերծում քիմիական լուծույթներով.

բ. չորացնող կամ կոլեկտորադրենաժային համակարգեր՝ 5 կմ և ավելի երկարությամբ,

10) շինանյութի արդյունաբերության բնագավառում՝

ա. ցեմենտի կամ կրի կամ գաջի արտադրություն՝ օրական մինչև 100 տոննա։

5. Փորձաքննության ենթակա չեն պետական անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար անհետաձգելի միջոցառումները։

6. Փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ անտառային հողերում կամ պատմամշակութային հուշարձանների սահմաններում կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում կամ բնապահպանական այլ հողերում և որոնք ներառված չեն փորձաքննական դրական եզրակացություն ստացած հիմնադրութային փաստաթղթերում։ Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով։

7. Ձեռնարկողի նախաձեռնությամբ փորձաքննության ենթակա են սույն հոդվածով չսահմանված բոլոր նախատեսվող գործունեությունները: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով:

8. Սույն հոդվածում թվարկված նախատեսվող գործունեության տեսակների ընդլայնումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

9. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածում թվարկված նախատեսվող գործունեության տեսակների սահմանաչափերը չգերազանցող գործունեության ընդլայնումը, վերակառուցումը կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինումը կամ վերապրոֆիլավորումը, որի արդյունքում գործունեության սահմանաչափերը համընկնելու են սույն հոդվածով սահմանված նախատեսվող գործունեության տեսակների սահմանաչափերին:

ԳԼՈՒԽ 4

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 14. Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունը

1. Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են մինչև նախատեսվող գործունեության իրականացումը՝ բացառությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 94.1-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Փորձաքննության իրականացման կարգը հաստատում է Կառավարությունը:

2. Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Հոդված 15. Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության հիմնական գնահատման գործընթացները

1. ՇՄԱԳ իրականացնում է ձեռնարկողն անձամբ կամ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջոցով:

2. Ընդերքօգտագործման ոլորտի նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունը և կից փաստաթղթերը փորձաքննության են ներկայացվում ոլորտի լիազոր մարմնի միջոցով:

3. Ազդեցության գնահատման փուլում՝

1) գնահատվում է նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա,

2) բացահայտվում են նախատեսվող գործունեության լուծումների այլընտրանքային տարբերակները և գնահատվում է դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի, մարդու առողջության և սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա,

3) կատարվում է նախատեսվող գործունեության այլընտրանքային տարբերակների էկոլոգատնտեսական վերլուծություն և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորում,

4) մշակվում են բնապահպանական միջոցառումներ, ներառյալ՝ ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կանխարգելելու, նվազեցնելու կամ բացառելու նպատակով.

5) հաշվի են առնվում ազդեցության աստիճանը՝ հիմք ընդունելով ազդեցության ենթակա տարածքի աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, ազդեցության հավանականությունը, բարդությունը, աստիճանը, տևողությունը, հաճախականությունը և տարբեր ազդեցությունների գումարային բնույթը.

6) գնահատման ընթացքում հաշվի է առնվում նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը:

4. Գնահատումն իրականացվում է համաձայն սույն օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի: Գնահատումն իրականացնելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների ներկայացրած հիմնավոր դիտողությունները և առաջարկությունները: Դրանք չընդունելու դեպքում հաշվետվությունում ներառվում են համապատասխան հիմնավորումներ: Գնահատման մեթոդիկան հաստատում է Կառավարությունը:

5. Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատում է Կառավարությունը:

6. Ազդեցության գնահատման արդյունքում ձեռնարկողը կամ նրա պատվերով ազդեցության գնահատումն իրականացնողը կազմում է հաշվետվություն՝ սույն օրենքի 16-րդ հոդվածին համապատասխան, և ներկայացնում փորձաքննության:

7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում ձեռնարկողը կարող է խորհրդակցել լիազորված մարմնի, պետական կառավարման մարմինների, ազդակիր համայնքի ղեկավարների, շահագրգիռ հանրության հետ:

Հոդված 16. Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հաշվետվությունների բովանդակությունները

1. Ա կատեգորիայի նախատեսվող գործունեության՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող ընդհանուր պահանջներն են՝

1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան, և նպատակը.

3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագիրը և իրադրության սխեման.

4) նախատեսվող գործունեության նկարագիրը և նպատակը, արտադրական հզորությունները, ֆիզիկական, տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերը, պահանջվող բնական ռեսուրսների, օգտագործվող հումքի ու նյութերի, արտանետումների, արտահոսքերի, թափոնների, արտադրական լցակույտերի, ֆիզիկական ներգործությունների և արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի նկարագրությունը.

5) բոլոր հնարավոր տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը.

6) շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի գնահատումները: Տնտեսական վնասի հատուցման արժեքը և վճարման ժամանակացույցը.

7) նախատեսվող գործունեության (շինարարության և շահագործման փուլ, ռիսկերի գնահատում), ներառյալ՝ այլընտրանքային տարբերակների իրականացման դեպքում, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների, բնական ռեսուրսների, պայմանների հնարավոր փոփոխությունների և դրանց ծավալների նկարագիրն առանձին, գումարային և ամբողջական գնահատումը.

8) սոցիալական հնարավոր ազդեցությունները, ռիսկերը, օգուտները, վերլուծական բնութագրերը.

9) հնարավոր արտակարգ իրավիճակների հետևանքով ազդեցության ծավալը, աստիճանը, ազդեցության նվազեցման կամ վերացման հնարավորությունները, ուղիները և միջոցները.

10) նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կլիմայի հնարավոր փոփոխություններ առաջացնող գործոնները, ներառյալ՝ ջերմոցային գազերի արտանետումները, դրանց բնույթը, ծավալը,

11) նախատեսվող գործունեության համապատասխանությունը հաստատված հիմնադրութային փաստաթղթերին.

12) բոլոր հնարավոր տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը՝ շրջակա միջավայրի պահպանության, տնտեսական, սոցիալական տեսանկյունից.

13) բնապահպանական կառավարման պլանը,

14) նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիրը.

15) նախատեսվող գործունեության հաշվետվությամբ ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմող ամփոփ բովանդակության նյութեր՝ քարտեզներ, սխեմաներ, գրաֆիկներ, աղյուսակներ և այլն.

16) շրջակա միջավայրի վերաբերյալ օգտագործված էլեկտրային տվյալների աղբյուրները.

17) գնահատման և հաշվետվության կազմման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, ներառյալ՝ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.

18) հաշվետվության ամփոփ բովանդակությունը. որը ներառում է տեղեկատվություն ձեռնարկողի մասին, նախատեսվող գործունեության ոչ տեխնիկական նկարագիրը, իրականացման վայրը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունների և դրանց մեղմման միջոցառումների հանրամատչելի, համառոտ նկարագիրը, կից համապատասխան քարտեզագրական և գրաֆիկական նյութեր։

2. Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող ընդհանուր պահանջներն են՝

1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան և նպատակը.

3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման.

4) նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման և փակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները՝ շինարարության, շահագործման և փակման փուլերում.

6) բնապահպանական կառավարման պլանը.

7) նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիրը.

3. Հաշվետվություններին կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերն են՝

1) նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը.

2) տեղական ինքնակառավարման մարմնի (մարմինների)՝ սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված համաձայնությունը, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ.

3) տեղական ինքնակառավարման մարմնի (մարմինների) կողմից սույն օրենքի 17-րդ հոդվածին համապատասխան իրականացված հանրային լսումների փաստաթղթերը (ծանուցման հրապարակման պատճենը, ստացված դիտողություններն ու առաջարկությունները, հանրային լսումների արձանագրությունները).

4) պետական տուրքի անդորրագրի պատճենը։

Հոդված 17. Տեղական ինքնակառավարման մարմնի (մարմինների) կողմից նախնական համաձայնության տրամադրումը

1. Ձեռնարկողը, ով մտադիր է իրականացնել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված նախատեսվող գործունեություն, համայնքի (համայնքների)՝ որի վարչական սահմաններում իրականացվելու է նախատեսվող գործունեությունը, տեղական ինքնակառավարման մարմնին (մարմիններին) է ներկայացնում ծանուցում, որը ներառում է՝

1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը,
2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան և նպատակը,
3) նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

2. Տեղական ինքնակառավարման մարմինը (մարմինները) ծանուցումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում կատարում է(են) հանրության ծանուցում և ծանուցումից առնվազն 12 աշխատանքային օր հետո իրականացնում է(են) հանրային լսում (լսումներ): Սույն օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը (մարմինները) ձեռնարկողին տրամադրում է (են) նախատեսվող գործունեության վերաբերյալ՝

1) նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն,
2) հանրային լսման (լսումների) արձանագրություն, լուսանկարներ կամ տեսաձայնագրություններ, հանրության առաջարկությունները և դիտողությունները (առկայության դեպքում):

Հոդված 18. ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլը

1. ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլն սկսվում է սույն օրենքով սահմանված ՇՄԱԳ հաշվետվությունը, կից լրակազմ փաստաթղթերով, ձեռնարկողի կողմից լիազոր մարմին ներկայացնելու պահից:

2. Լիազոր մարմինը ներկայացված փաստաթղթերը, դրանք լիազոր մարմին մուտքագրվելու օրվանից յոթ աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է ձեռնարկողին, եթե այն չի պարունակում ՇՄԱԳ հաշվետվությունը և սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստաթղթերը:

3. Նախատեսվող գործունեությունն անդրսահմանային համատեքստում ազդեցության գնահատման ենթակա լինելու դեպքում լիազոր մարմինն այդ մասին տեղեկացնում է ձեռնարկողին:

4. ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլում լիազորված մարմինը գործընթացին ներգրավում է գործընթացի մասնակիցներին:

5. ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլում լիազորված մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինը (մարմինները) ձեռնարկողի աջակցությամբ իրականացնում են հանրային ծանուցում(ներ) և հանրային լսում(ներ):

6. ՇՄԱԳ հաշվետվությունը լրակազմ չլինելու կամ դրանում պարունակվող տեղեկատվության մեջ անճշտություններ կամ թերություններ լինելու դեպքում՝ ՇՄԱԳ հաշվետվությունը պարզաբանող գրությամբ ձեռնարկողին լրամշակման կամ լրակազմման է վերադարձվում: Լրամշակված կամ լրակազմված ՇՄԱԳ հաշվետվությունը ձեռնարկողի կողմից լիազոր մարմին է ներկայացվում պարզաբանող գրությունը լիազոր մարմնից ելքագրվելու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում, որի դեպքում լրամշակման կամ լրակազման վերադարձված ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլի ժամկետը համարվում է կասեցված մինչև ձեռնարկողի կողմից լրամշակված կամ լրակազմված ՇՄԱԳ հաշվետվությունը լիազոր մարմին մուտքագրվելու օրը: 30 աշխատանքային օրվա ընթացքում ձեռնարկողի կողմից լրամշակված կամ լրակազմված ՇՄԱԳ հաշվետվությունը չներկայացնելու կամ կրկին ոչ լրակազմ կամ չլրամշակված ներկայացնելու դեպքում ՇՄԱԳ հաշվետվությունը համարվում է մերժված օրենքի ուժով: Ձեռնարկողի կողմից լրամշակված կամ լրակազմված ՇՄԱԳ հաշվետվությունը ոչ լրակազմ կամ չլրամշակված ներկայացնելու դեպքում լիազոր մարմինը ոչ լրակազմ կամ չլրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է ձեռնարկողին՝ օրենքի ուժով ՇՄԱԳ հաշվետվությունը մերժված համարվելու մասին:

7. Բացառիկ դեպքերում, երբ ՇՄԱԳ փորձաքննության իրականացումն ուղղակիորեն կապված է տեսչական մարմինների կողմից ստուգումների իրականացման հետ, և անհնարին է ՇՄԱԳ փորձաքննության իրականացումը մինչև տեսչական մարմինների կողմից ստուգում իրականացնելը, լիազոր մարմինն այդ մասին տեղեկացնում է ձեռնարկողին: Տեղեկացման օրվանից ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլի ժամկետը համարվում է կասեցված՝ մինչև ստուգման ամփոփված արդյունքների ստացումը:

8. Սույն օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքում ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլի ժամկետը համարվում է կասեցված՝ մինչև համապատասխան եզրակացության ստացումը:

9. ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլում կազմվում է փորձաքննական եզրակացություն՝ հետևյալ ցուցանիշների վերլուծության արդյունքում.

1) հաշվետվությունների լիարժեքությունը, ամբողջականությունը.

2) հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության այլընտրանքային մոտեցումներն ու լուծումները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին ու սահմանափակումներին համապատասխանությունը.

4) բնապահպանական կառավարման պլանի, շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի ծրագրի արդյունավետությունը.

5) գործընթացի մասնակիցների ծանուցման ու հանրային լսումների ապահովման և կարծիքների դիտարկման արդյունավետությունը, հիմնավորվածությունը:

10. ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլի ժամկետներն են՝

1) նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում՝ մինչև 80 աշխատանքային օր (բացառությամբ անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության և Կառավարության որոշմամբ փորձաքննության գործընթացին միջազգային փորձագետ(ներ) կամ կազմակերպություն(ներ) ներգրավելու դեպքերի).

2) նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում՝ մինչև 40 աշխատանքային օր (բացառությամբ անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության և Կառավարության որոշմամբ փորձաքննության գործընթացին միջազգային փորձագետ(ներ) կամ կազմակերպություն(ներ) ներգրավելու դեպքերի).

11. Սույն հոդվածի 6-8-րդ մասերով սահմանված դեպքերում լիազոր մարմինը փորձաքննական գործընթացի ժամկետը կարող է երկարաձգել 30 աշխատանքային օրով, ինչի մասին ձեռնարկողը ծանուցվում է։

12. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում գործունեության դեպքում սույն հոդվածով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառի լիազոր մարմնի միջոցով։

Հոդված 19. Նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցման կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինման կամ վերապրոֆիլավորման կամ կոնսերվացման կամ տեղափոխման կամ լուծարման կամ փակման կամ քանդման կամ նախագծային փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունը

1. Սույն օրենքի 13-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ լուծարում կամ փակում կամ քանդում կամ նախագծային փոփոխություն իրականացնելուց առաջ, ձեռնարկողը լիազոր մարմին է ներկայացնում հայտ, որը պարունակում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկությունները և սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված Կառավարության որոշմամբ հաստատված լրացված ձևաթուղթը։

2. Հայտը ներառում է՝

1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը,

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան և նպատակը,

3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը.

4) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) գոյություն ունեցող և նախատեսվող փոփոխությունների համեմատական վերլուծությունը:

3. Սույն հոդվածով սահմանված հայտը կամ լրացված ձևաթուղթը լրակազմ չլինելու կամ դրանում պարունակվող տեղեկատվության մեջ անճշտություններ կամ թերություններ լինելու դեպքում հայտը կամ ձևաթուղթը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում պարզաբանող գրությամբ ձեռնարկողին լրակազմման է վերադարձվում:

4. Լիազոր մարմինը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հայտը ստանալու, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում՝ լրակազմված հայտը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ձեռնարկողին գրավոր տեղեկացնում է.

1) նախատեսվող գործունեության տեսակի վերակառուցումը կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինումը կամ վերապրոֆիլավորումը կամ կոնսերվացումը կամ տեղափոխումը կամ լուծարումը կամ փակումը կամ քանդումը կամ նախագծային փոփոխությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա լինելու մասին, որի դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունն իրականացվում է սույն օրենքով նախատեսված կարգով, կամ
2) նախատեսվող գործունեության վերակառուցումը կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինումը կամ վերապրոֆիլավորումը կամ կոնսերվացումը կամ տեղափոխումը կամ լուծարումը կամ փակումը կամ քանդումը կամ նախագծային փոփոխությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա չլինելու մասին:

5. Նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցման կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինման կամ վերապրոֆիլավորման կամ կոնսերվացման կամ տեղափոխման կամ լուծարման կամ փակման կամ քանդման կամ նախագծային փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա լինելը որոշելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 20. Փորձաքննական եզրակացությունը

1. Փորձաքննական եզրակացությունը բաղկացած է ներածական, նկարագրական, պատճառաբանական, եզրափակիչ մասերից.

1) ներածական մասը ներառում է՝ համառոտ տեղեկատվություն ձեռնարկողի, հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության մասին.

2) նկարագրական մասը ներառում է՝ ՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության նկարագրությունը, բնապահպանական կառավարման պլանով և մոնիթորինգի ծրագրով նախատեսված միջոցառումները.

3) պատճառաբանական մասը ներառում է՝ հիմնադրութային փաստաթղթի դրույթների կամ նախատեսվող գործունեության թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ հիմնավորված եզրահանգումները.

4) եզրափակիչ մասը ներառում է՝ սույն օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված ցուցանիշների ամփոփ վերլուծությունը, եզրակացություն փորձաքննական եզրակացության դրական կամ բացասական լինելու վերաբերյալ:

2. Փորձաքննական դրական եզրակացությունը կարող է պարունակել պարտադիր կատարման ենթակա պահանջներ կամ պայմաններ:

3. Փորձաքննական դրական եզրակացությունը տրվում է հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության փաստաթղթերում նշված ժամկետով, եթե եզրակացությունում այլ ժամկետ չի սահմանված, որը պետք է ունենա հիմնավոր պատճառաբանություն:

4. Փորձաքննական եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների ներկայացրած եզրակացությունները կամ կարծիքները: Գործընթացի մասնակիցների կարծիքները չընդունելու դեպքում լիազոր մարմինը տալիս է հիմնավոր պատճառաբանումներ: Փորձաքննական եզրակացությունը հաստատում է լիազոր մարմինը:

5. Փորձաքննական եզրակացությունը յոթ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

6. Առանց փորձաքննական դրական եզրակացության արգելվում է հիմնադրութային փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումը:

7.Փորձաքննական դրական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե հիմնադրութային կամ նախագծային փաստաթղթերով նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական դրական եզրակացության տրվելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

8. Փորձաքննական եզրակացությունը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 21. Փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելը

1. Փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 94.1-ին հոդվածի 4-րդ կամ 6-րդ մասերով սահմանված իրավախախտման համար ձեռնարկողը ենթարկվել է վարչական պատասխանատվության,

2) ընդունվել է բնապահպանական նոր օրենսդրություն, որով սահմանվել է փորձաքննական եզրակացություններն ուժը կորցրած ճանաչելու պահանջ,

3) փորձաքննական եզրակացություն տալուց հետո ի հայտ են եկել էկոլոգիական նոր գործոններ:

2. Ձեռնարկողը, փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ լիազոր մարմնի ընդունած որոշումը կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Գ Լ ՈՒ Խ 5

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ , ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդված 22. Ռազմավարական էկոլոգիական գնահատման ենթակա հիմնադրութային փաստաթղթերի տեսակները

1. Ռազմավարական էկոլոգիական գնահատման (այսուհետ՝ ՌԷԳ) ենթակա են սոցիալ-

տնտեսական զարգացման, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, տուրիզմի, տարածքային զարգացման, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, ռեկրեացիայի, անտառատնտեսության, ձկնաբուծության, թափոնների գործածության, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրութային փաստաթղթերը, որոնք սույն օրենքի 13-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեությունների տեսակների իրականացման հիմքեր են պարունակում:

2. ՌԷԳ-ի ենթակա են բոլոր հիմնադրութային փաստաթղթերը և դրանց ցանկացած փոփոխություն, որոնք հնարավոր ազդեցություն կունենան բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքների, պատմամշակութային հուշարձանների վրա: ՌԷԳ-ի և փորձաքննության ենթակա լինելը որոշում է ձեռնարկողը՝ լիազոր մարմնի հետ համատեղ խորհրդակցությունների արդյունքում:

3. Հիմնադրութային փաստաթղթերի փոփոխություններին կամ փոքր տարածքների պլանավորմանը վերաբերող նախագծերի ՌԷԳ-ի և փորձաքննության ենթակա լինելը որոշում է ձեռնարկողը՝ լիազոր մարմնի հետ համատեղ խորհրդակցությունների արդյունքում:

4. ՌԷԳ-ի և փորձաքննության ենթակա չեն պետական անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակներին վերաբերող հիմնադրութային փաստաթղթերը:

Հոդված 23. Ռազմավարական էկոլոգիական գնահատումը

1. Հիմնադրութային փաստաթղթի ՌԷԳ-ը և փորձաքննությունն իրականացվում է մինչև հիմնադրութային փաստաթղթի ընդունումը:
2. ՌԷԳ իրականացման փուլերն են՝
1) ՌԷԳ շրջանակի որոշում.
2) ՌԷԳ հաշվետվության կազմում.
3) ՌԷԳ արդյունքների հաշվի առնումը հիմնադրութային փաստաթղթում:
3. Ձեռնարկողը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փուլերում խորհրդատվության համար դիմում է լիազոր մարմնին, առողջապահության բնագավառի կառավարման լիազոր մարմնին, անհրաժեշտության դեպքում նաև սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված բնագավառների կառավարման լիազոր պետական մարմիններին՝ հաշվի առնելով հիմնադրութային փաստաթղթի բնագավառը, տեղական ինքնակառավարման մարմիններին, սույն օրենքի 7-րդ գլխով սահմանված կարգով ներգրավում հանրությանը, իսկ անհրաժեշտության դեպքում սույն օրենքի 6-րդ գլխով սահմանված կարգով՝ իրականացնում անդրսահմանային ծանուցում և քննարկումներ:

Հոդված 24. ՌԷԳ հաշվետվության փորձաքննության փուլ

1. ՌԷԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվում է ՌԷԳ հաշվետվությունը լիազոր մարմին ներկայացնելու օրվանից մինչև 80 աշխատանքային օրվա ընթացքում (բացառությամբ անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթերի), ինչի արդյունքում՝ լիազոր մարմինը ձեռնարկողին է տրամադրում փորձաքննական եզրակացություն:
2. ՌԷԳ հաշվետվության փորձաքննական եզրակացությունը տրամադրվում է համաձայն սույն օրենքի 20-րդ հոդվածի:
3.Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգը և ռազմավարական էկոլոգիական գնահատման մեթոդիկան սահմանում է Կառավարությունը:

Գ Լ ՈՒ Խ 6

ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԿԱՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդված 25. Անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության ազդեցության գնահատմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Եթե Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրութային փաստաթուղթը կամ նախատեսվող գործունեությունը, ինչպես նաև այլ պետությունների տարածքում հիմնադրութային փաստաթուղթը կամ նախատեսվող գործունեությունը կարող են ունենալ անդրսահմանային ազդեցություն, ապա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում են «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի, Հայաստանի Հանրապետության վավերացրած այլ միջազգային պայմանագրերի, միջազգային առողջապահական կանոնների և սույն օրենքի պահանջներին համապատասխան:

2. Անդրսահմանային ազդեցության փորձաքննական եզրակացությունը հաստատում է Կառավարությունը:

3. Անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության ազդեցության գնահատման ընթացակարգերի լիարժեքությունն ապահովելու և գնահատման արդյունքներն ամփոփելու անհրաժեշտության դեպքում լիազորված մարմինը համապատասխան հիմնավորմամբ կարող է երկարաձգել սույն օրենքով սահմանված ժամկետները:

Հոդված 26. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության անդրսահմանային ազդեցության գնահատումը

1. Հնարավոր անդրսահմանային ազդեցությունը գնահատման ընթացքում պարզվելու դեպքում՝ լիազոր մարմինը ձեռնարկողի հետ պարտավոր է ապահովել սույն հոդվածով սահմանված պահանջները:

2.Եթե Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենքի 13-րդ կամ 22-րդ հոդվածներով սահմանված որևէ հիմնադրութային փաստաթուղթ կամ նախատեսվող գործունեություն կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա նշանակալի վտանգավոր անդրսահմանային ազդեցություն, ապա լիազորված մարմինը դրա մասին սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ծանուցում է ազդակիր պետության համապատասխան լիազորված պետական մարմնին՝ միաժամանակ հայցելով տեղեկատվություն այդ պետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացման համար պահանջվող փաստաթղթերի և հասարակական լսումների ընթացակարգի վերաբերյալ:

3. Եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով, ապա ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) հիմնադրութային փաստաթուղթը և ՌԷԳ հաշվետվությունը, տեղեկություններ նախատեսվող գործունեության, ներառյալ ցանկացած տեղեկություն դրանց հնարավոր անդրսահմանային ազդեցության վերաբերյալ.

2) հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հնարավոր որոշումների կայացման բնութագրերը.

3) փորձաքննության ընթացակարգերի և ժամկետների վերաբերյալ.

4) անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացին մասնակցելու մտադրության մասին տվյալ երկրի պատասխան տալու ժամկետները: Լիազոր մարմինը աջակցում է ձեռնարկողին՝ ծանուցումը և հարցումը նախապատրաստելու գործընթացում:

4. Անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացին մասնակցելու մտադրության մասին ազդակիր պետության պատասխան տալու ժամկետը չի կարող գերազանցել ծանուցումն ստանալու օրվանից 45 աշխատանքային օրը, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ ժամկետ չի նախատեսված:

5. Եթե ծանուցում ստացած պետությունը պաշտոնապես հրաժարվել է անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացին մասնակցելուց կամ սահմանված ժամկետում չի պատասխանել մասնակցելու իր մտադրության մասին, ապա անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացն իրականացվում է սույն օրենքով սահմանված ընթացակարգով:

6. Լիազոր մարմինը ծանուցում ստացած երկրի կողմից անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացին մասնակցելու իր մտադրության մասին պաշտոնական գրությունն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ազդակիր երկիր ներկայացնում է ազդեցության գնահատմանն անհրաժեշտ փաստաթղթերը՝ նշելով դրանց վերաբերյալ կարծիքի ներկայացման ժամկետը, որը չի կարող գերազանցել նրա կողմից փաստաթղթերն ստանալու օրվանից 60 աշխատանքային օրը, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ ժամկետ չի նախատեսված:

7. Լիազորված մարմինը և ձեռնարկողը օժանդակում են ազդակիր պետության համապատասխան լիազորված մարմնին տվյալ երկրի համապատասխան մարմինների և առավել հնարավոր ազդեցության ենթակա տարածքների հանրության շրջանում հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը:

8. Լիազոր մարմինը և ձեռնարկողը հնարավոր ազդեցության ենթակա պետության համապատասխան լիազորված մարմնի հետ համաձայնեցնում են հնարավոր անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ խորհրդակցությունների անցկացման ձևն ու ընթացակարգը, ազդեցության կանխման կամ նվազեցման միջոցները և օժանդակում են այդպիսի խորհրդակցությունների իրականացմանը:

9. Ձեռնարկողն ապահովում է ազդակիր պետությունից ստացված կարծիքների և այլ անհրաժեշտ նյութերի թարգմանությունը:

Հոդված 27. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի վրա այլ պետության հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող

գործունեության անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացը

1. Եթե Հայաստանի Հանրապետությունում ստացվում է ծանուցում Հայաստանի Հանրապետության վրա անդրսահմանային ազդեցություն առաջացնելու հնարավորություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ, և ստացողը լիազոր մարմինը չէ, ապա ծանուցումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, այն ուղարկվում է լիազոր մարմին:

2. Լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրազեկում է ծագման պետության համապատասխան լիազորված մարմնին՝ ծանուցումն ստանալու և անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացին մասնակցելու կամ չմասնակցելու իր մտադրության մասին՝ ծանուցման մեջ նշված ժամկետում և կարգով:

3. Եթե ծանուցման մեջ պատասխան տալու ժամկետ ամրագրված չէ, ապա լիազոր մարմինը ծանուցող երկրին պատասխանում է ծանուցումն ստանալուց հետո՝ 45 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Եթե Հայաստանի Հանրապետության երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ, ապա լիազոր մարմինը ծանուցման քննարկումն ապահովում է առաջնորդվելով սույն օրենքիպահանջներով:

5. Եթե լիազոր մարմինը որոշում է ընդունել մասնակցել անդրսահմանային գործընթացին ապա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջները, միաժամանակ տեղեկացնելով ծագման պետության լիազորված մարմնին սույն օրենքի պահանջների, ներառյալ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատուման, փաստաթղթերի թարգմանության, հանրության մասնակցության ապահովման և սույն օրենքով պահանջվող այլ ծախսերի համար նրա կողմից անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովելու մասին:

6. Լիազոր մարմինը ծագման պետության համապատասխան լիազորված մարմնի հետ համաձայնեցնում է անհրաժեշտ փաստաթղթերի ծավալն ու բովանդակությունը, հնարավոր անդրսահմանային ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ խորհրդակցությունների անցկացման ձևն ու ընթացակարգը, ազդեցության կանխման կամ նվազեցման միջոցները:

7. Եթե Հայաստանի Հանրապետության երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրերով կամ սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն այլ բան չի նախատեսված, ապա լիազոր մարմինը փաստաթղթերն ստանալուց հետո սույն օրենքով ու իրավական այլ ակտերով սահմանված կարգով ապահովում է փաստաթղթերի ուսումնասիրությունն ու դրանց քննարկումը և Կառավարության հաստատած փորձաքննական եզրակացությունն ուղարկում է ծանուցող երկիր:

8. Եթե լիազոր մարմինը տեղեկացված է եղել այլ երկրի տարածքում հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության մասին, որոնք կարող են անդրսահմանային ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի վրա, և դրա վերաբերյալ տվյալ երկրից ծանուցում չի ստացվել, ապա լիազոր մարմինը, դրա մասին նախապես տեղեկացնելով Կառավարությանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում է տվյալ երկրի համապատասխան լիազորված պետական մարմնին՝ հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացի վերաբերյալ ծանուցում ստանալու նպատակով:

Հոդված 28. Անդրսահմանային ազդեցության բնագավառում միջազգային համագործակցությունը

1. «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով Հայաստանի Հանրապետությունը կարող է կնքել երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրեր կամ ձեռք բերել այլ պայմանավորվածություններ:

2. Անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունն այլ երկրների հետ կարող է ստեղծել ժամանակավոր կամ մշտական գործող մարմիններ, որոնց գործունեության կարգը որոշվում է համապատասխան երկկողմ պայմանագրերով կամ այլ գրավոր համաձայնություններով:

Գ Լ ՈՒ Խ 7

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 29. Հանրության ծանուցումը և հանրային լսումների իրականացումը

1. Հանրությունն իրավունք ունի մասնակցելու ՇՄԱԳ, ՌԷԳ և փորձաքննության գործընթացներին:
2. Լիազոր պետական մարմինը, տարածքային կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ձեռնարկողն ապահովում են հանրության արդյունավետ և ժամանակին մասնակցությունը ՇՄԱԳ, ՌԷԳ և փորձաքննության գործընթացներին, ներառյալ՝
    1) վաղ փուլում, երբ բաց են բոլոր հնարավորությունները զանազան տարբերակների դիտարկման համար, և երբ կարելի է ապահովել հանրության արդյունավետ մասնակցությունը ՇՄԱԳ, ՌԷԳ և

փորձաքննության գործընթացներն սկսելու և դրանց մասնակցելու իրավունքի մասին տեղեկատվության տարածմամբ,

2) ՇՄԱԳ, ՌԷԳ և փորձաքննության փուլի փաստաթղթերի և այլ տեղեկատվության մատչելիությամբ,
3) լսումներին հանրության մասնակցության համար պայմանների ստեղծմամբ,
4) պաշտոնական կայք էջերի և տեղեկատվության տարածման այլ միջոցներով (մամուլ, զանգվածային լրատվության այլ միջոցներ, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների, հանրային նշանակության շենքերի ցուցատախտակներ) հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության, փորձաքննական գործընթացի վերաբերյալ հանրության իրազեկմամբ:

3.ՌԷԳ-ի ծանուցման բովանդակությունը պարունակում է՝

1) ձեռնարկողի անունը (անվանումը),
2) հիմնադրութային փաստաթղթի անվանումը և նպատակը,
3) ամփոփ նկարագիրը,
4) հիմնադրութային փաստաթղթի դրույթների վերաբերյալ տեղեկատվությունը,
5) հանրային լսումների իրականացման ժամկետները, հասցեն,
6) տեղեկատվություն ստանալու հասցեն և առաջարկություններ ներկայացնելու ժամկետները,

4. ՇՄԱԳ-ի ծանուցման բովանդակությունը պարունակում է՝

1) ձեռնարկողի անունը (անվանումը),
2) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը,
3) նախատեսվող գործունեության իրականացման վայրը,
4) հանրային լսումների իրականացման ժամկետները, հասցեն,
5) փաստաթղթերին ծանոթանալու և տեղեկատվության ստացման հնարավորությունը, առաջարկություններ ներկայացնելու համար նախատեսված հասցեն:

5. Ծանուցումը հրապարակվում է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով, փակցվում է մարզպետարանի կամ ազդակիր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրի կամ հանրային նշանակության շենքերի (մշակույթի, արվեստի շենքեր, գիտական, կրթական, ուսումնական նշանակության շենքեր) հայտարարությունների ցուցանակի վրա, հիմնադրութային փաստաթղթի դեպքում ծանուցումը տեղադրվում է նաև ձեռնարկողի պաշտոնական կայքում: Փորձաքննության փուլում ծանուցումը տեղադրվում է նաև լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

Հոդված 30. Հանրային լսումների իրականացում և առաջարկությունների ներկայացում

1. ՇՄԱԳ, ՌԷԳ և փորձաքննության, այդ թվում՝ հանրային լսումների ընթացքում, հանրությունն, սույն օրենքով սահմանված ժամկետներում, իրավունքի ունի լիազոր մարմին և ձեռնարկողին ներկայացնելու ցանկացած գրավոր և բանավոր կարծիքներ, առաջարկություններ և դիտողություններ՝ առանց դրանց հիմքում ընկած պատճառների հիմնավորման:
2. Լիազոր մարմինը, ձեռնարկողը պարտավոր են քննարկել հանրության ներկայացրած բոլոր առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները, փորձաքննական եզրակացության հիմքում դնել հանրության մասնակցության արդյունքները և հիմնավոր դիտողությունները:
3. Հանրությունը գրավոր կամ բանավոր, այդ թվում նաև հանրային լսումների ընթացքում, դիտողությունները և առաջարկությունները կարող է ներկայացնել ձեռնարկողին, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, փորձաքննության փուլերում նաև լիազոր մարմնին:
4. Հանրության գրավոր կամ էլեկտրոնային առաջարկությունները ներկայացվում են.
   1) սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված դեպքերում ծանուցումից հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում,
   2) ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլում՝ հիմնադրութային փաստաթղթի և Ա կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում՝ ծանուցումից հետո 18 աշխատանքային օրվա ընթացքում,
   3) ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության փուլում՝ Բ կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում, ծանուցումից հետո 12 աշխատանքային օրվա ընթացքում:
5. Փորձաքննության փուլերում հանրային լսումները, իրականացվում են ծանուցումից ոչ շուտ, քան 12-րդ օրը:
6. Լսումների ընթացքում ձեռնարկողի կողմից ներկայացվում են ՌԷԳ կամ ՇՄԱԳ հաշվետվությունները:
7. Դիտողությունները և առաջարկությունները ձեռնարկողը և լիազոր մարմինը պետք է հաշվի առնեն: Հաշվի չառնելու դեպքում տրվում են հիմնավոր պատճառաբանումներ:
8. Հանրային լսումների արդյունքները արտացոլվում են համապատասխան հաշվետվություններում և փորձաքննական եզրակացության մեջ, որը հաստատումից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում:
9. Եթե նախատեսվող գործունեությանը վերաբերող փաստաթղթերը և ՇՄԱԳ հաշվետվությունը պարունակում են Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված բացահայտման ոչ ենթակա տեղեկատվություն, ձեռնարկողն այդպիսի տեղեկատվությունը դուրս է բերում հաշվետվությունից՝ դրա մնացյալ մասը մատչելի դարձնելով հանրությանը: Նշված դեպքերում շրջակա միջավայրի վրա ազդեցությանը, ներառյալ՝ արտանետումների և արտահոսքերի քանակական և որակական բնութագրերին, ազդեցության

ֆիզիկական և կենսաբանական գործոններին, բնական ռեսուրսների օգտագործմանը և թափոնների կառավարմանը վերաբերող տեղեկատվությունը համարվում է բաց և դրա մատչելիությունը չի կարող սահմանափակվել:

10. Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում հանրության կողմից կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման ընթացակարգը և ժամկետները սահմանում է Կառավարությունը:

ԳԼՈՒԽ 8

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 31. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում ձեռնարկողների իրավունքներն ու պարտականությունները

1. Գնահատման և փորձաքննության գործընթացում ձեռնարկողն իրավունք ունի՝

1) լիազոր մարմնից ստանալու գնահատման և փորձաքննության գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն.

2) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալու տարածքին առնչվող գործող հիմնադրութային փաստաթղթերը, ինչպես նաև ՇՄԱԳ իրականացնելու համար անհրաժեշտ ցանկացած այլ տեղեկատվություն.

3) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու փորձաքննական եզրակացությունը և ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ լիազոր մարմնի ընդունած որոշումը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

2. Փորձաքննության գործընթացում և նախատեսվող գորունեության իրականացման ժամանակ ձեռնարկողը պարտավոր է՝

1) պահպանել սույն օրենքով սահմանված պահանջները.

2) տրամադրել սույն օրենքով սահմանված փաստաթղթերն ու տեղեկատվությունները լիազոր մարմնին.

3) ապահովել ներկայացվող նյութերի ամբողջականությունը, հավաստիությունը և հիմնավորվածությունը.

4) իրականացնել փորձաքննության ընթացքում հանրության ծանուցումը և հանրային լսումները.

5) տրամադրել համապատասխան նյութերն ու փաստաթղթերը հանրային լսումներ անցկացնողներին.

6) ընդունել կամ հաստատման ներկայացնել հիմնադրութային փաստաթուղթը և իրականացնել նախատեսվող գործունեությունը միայն փորձաքննական դրական եզրակացության առկայության դեպքում:

7) սահմանված ժամկետում կատարել փորձաքննական եզրակացության պահանջներն ու պայմանները և նախատեսվող գործունեությունն իրականացնել փորձաքննական դրական եզրակացություն ստացած նախագծային փաստաթղթերին և ՇՄԱԳ հաշվետվությանը համապատասխան:

ԳԼՈՒԽ 9

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

Հոդված 32. Փորձաքննության գործընթացում փորձագետի ներգրավմանը ներկայացվող պահանջները

1. Լիազոր մարմինը փորձաքննության գործընթացին որպես փորձագետ կարող է ներգրավել համապատասխան փորձագետ(ներ)ի կամ կազմակերպության(ությունների):

2. Որպես փորձագետ կարող է հանդիսանալ այն իրավաբանական անձը, որի կանոնադրական գործառույթները համապատասխանում են փորձաքննության ենթակա առարկային:

3. Ֆիզիկական անձ հանդիսացող փորձագետը պետք է ունենա համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթություն և համապատասխան բնագավառում առնվազն տաս տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

4. Փորձաքննության ընթացքում փորձագետների ներգրավումը կատարվում է պայմանագրային հիմունքներով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրով սահմանվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, փորձագետների աշխատանքի բովանդակությունը, ծավալն ու ժամկետները, վճարման կարգն ու չափը և կողմերի համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ պայմաններ:

6. Փորձաքննության գործընթացում որպես փորձագետ չեն կարող ներգրավվել այն անձինք, որոնք մասնակցել են տվյալ հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության նախագծային կամ դրանց առնչվող այլ փաստաթղթերի մշակմանը և (կամ) դրանց ազդեցության գնահատման գործընթացին:

7. Առանձին դեպքերում՝ Կառավարության որոշմամբ, փորձաքննության գործընթացին կարող են ներգրավվել միջազգային փորձագետ(ներ) կամ կազմակերպություն(ներ):

ԳԼՈՒԽ 10

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 33. Փորձաքննության գործընթացում փորձագետի իրավունքներն ու պարտականությունները

1. Փորձաքննության գործընթացում ներգրավված փորձագետն իրավունք ունի՝

1) լիազոր մարմնից ստանալու փորձաքննության ներկայացված բոլոր փաստաթղթերը.

2) լիազոր մարմնից և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալու փորձաքննության ենթակա փաստաթղթերին առնչվող բոլոր նյութերը.

3) մասնակցելու իր տված կարծիքի կամ եզրակացության ու փորձաքննական եզրակացության նախագծերի քննարկմանը.

4) մասնակցելու իր կողմից փորձաքննվող փաստաթղթերի հանրային լսումներին.

5) փորձաքննական եզրակացության կամ դրա առանձին դրույթների հետ համաձայն չլինելու դեպքում ներկայացնելու հատուկ կարծիք:

2. Փորձաքննության գործընթացում ներգրավված փորձագետը պարտավոր է՝

1) հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացնել սույն օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

2) ապահովել իր կազմած մասնագիտական եզրակացության հիմնավորվածությունը.

3) պահպանել օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունների գաղտնիությունը.

4) ցուցաբերել անաչառ, անկախ և օբյեկտիվ մոտեցում.

5) ապահովել պայմանագրային պահանջների կատարումը:

Գ Լ Ո Ւ Խ 11

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ

Հոդված 34. Փորձաքննության գործընթացի ֆինանսավորումը

1. Նախատեսվող գործունեության փորձաքննության գործընթացի իրականացման կամ 18-րդ հոդվածով սահմանված դեպքերի փորձաքննության համար վճարվում է պետական տուրք՝ համաձայն «Պետական տուրքի մասին» օրենքի:

2. Փորձագետի, տեղական ինքնակառավարման մարմինների՝ հանրության իրազեկման և լսումների կատարման ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:
3. Սույն օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում ֆինանսավորումն իրականացվում է ձեռնարկողի միջոցների հաշվին:

ԳԼՈՒԽ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 35. Փորձաքննության գործընթացում պատասխանատվությունը

1. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 36. Փորձաքննության գործընթացում վերահսկողությունը

1. Սույն օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 13

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 37. Անցումային դրույթներ

1. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված փորձաքննության գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձաքննության գործընթացն սկսվելու պահին գործող իրավական ակտերով:
2. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով, 19-րդ հոդվածի 5-րդ մասով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգավորումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:
3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, 21-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգավորումներում փոփոխությունները և

լրացումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 28-ի ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 28.2-րդ, 43-րդ, 44-րդ կետերի և 15-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 6.2-րդ կետի, 51-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի, 59-րդ հոդվածի 3-րդ մասի 19-րդ և 20-րդ կետերի 60.3-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, 60.4-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի, 60.5-րդ հոդվածի 1-3-րդ, 5-րդ , 8-րդ, 9-րդ մասերի, 60.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-4-րդ մասերի, 60.9-րդ հոդվածի վերնագրի և 1-ին մասի, 60.10-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 6-րդ մասի և 80-րդ հոդվածի 10-րդ մասի «շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի ոլորտի» բառերով։

Հոդված 2. Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 32-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,
2) 46-րդ կետում «շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը» բառերը փոխարինել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ՇՄԱԳ հաշվետվությունը և հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերը» բառերով։

Հոդված 3. Օրենսգրքի 20.2-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում«շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը» բառերը փոխարինել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ

հոդվածով սահմանված ՇՄԱԳ հաշվետվությունը և հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերը:» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 30-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ կետով՝

«6) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրել է կամ ուժը կորցրած է ճանաչվել:»,

2) 6-րդ մասը «պայմանագիրը» բառից հետո լրացնել «և ուժը կորցրած ճանաչել ընդերքօգտագործման համապատասխան թույլտվությունը և լեռնահատկացման ակտը» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 36-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ՇՄԱԳ հաշվետվությունը և հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերը:

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցված կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն չստացած աշխատանքային ծրագրի՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործումն արգելվում է:»:

Հոդված 6. Օրենսգրքի 39-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ՇՄԱԳ հաշվետվությունը և հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերը:»,

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցված կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն չստացած աշխատանքային ծրագրի՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործումն արգելվում է:»:

Հոդված 7. Օրենսգրքի 40-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 2. Դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը և այն սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասով

նախատեսված փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է սույն օրենսգրքով սահմանված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը ծրագիրն ստանալուց հետո՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, տրամադրում է եզրակացություն:»,

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական:»,

3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունն ստանալուց հետո լիազոր մարմինը՝ մինչև 20-օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձը օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:»,

4) 7-րդ մասի 7-րդ կետի «3-5-րդ» բառերը փոխարինել «3-6-րդ» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 48.1-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենսգրքի 50-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «4) Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ՇՄԱԳ հաշվետվությունը և հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերը:»,

2) 2-րդ մասը «ենթարկված» բառից հետո լրացնել «և դրական եզրակացություն ստացած» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 51-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «մինչև 100-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում» բառերով,

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փորձաքննական եզրակացությունը սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետներում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական:»,

3) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,
4) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,
5) 8-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Փորձաքննական դրական եզրակացություններն ստանալուց հետո լիազոր մարմինը՝ մինչև 20-օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին:»,
6) 14-րդ մասը «ենթարկված» բառից հետո լրացնել «և դրական եզրակացություն ստացած» բառերով:

Հոդված 11. Օրենսգրքի 56-րդ հոդվածի 6-րդ մասը «2-9-րդ» բառերից հետո լրացնել « և 11-րդ» բառերով:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 12-րդ բաժնի 12.4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

12.4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն.	
1. փորձաքննության գործընթացի իրականացման համար	
ա) նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի տեսակների	բազային տուրքի 1000-ապատիկի չափով, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների, որոնց համար՝ բազային տուրքի չափով, ինչպես նաև ոչ

փաստաթղթերի փորձաքննության համար	մետաղական օգտակար հանածոների արդյունահանման կամ հանքանյութի վերամշակման համար, որի համար՝ բազային տուրքի 500-ապատիկի չափով
բ) նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի տեսակների փաստաթղթերի փորձաքննության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների, որոնց համար՝ բազային տուրքի չափով
2.հայտի և ձևաթղթի ուսումնասիրության համար ՝	բազային տուրքի 15-ապատիկի չափով, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների, որոնց համար՝ բազային տուրքի չափով

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 94.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 94[1]. Առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության գործունեություն իրականացնելը

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության իրականացումն առանց փորձաքննական դրական եզրակացության (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի)՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված նախազգուշացման նշանակման օրվանից մեկամսյա ժամկետում համապատասխան փաստաթղթերի փաթեթը սահմանված կարգով փորձաքննության չներկայացնելը՝
   առաջացնում է տուգանքի նշանակում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկի չափով, իսկ«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

3. Փորձաքննական դրական եզրակացություն ստացած նախատեսվող գործունեության տեսակների ընդլայնումը կամ վերակառուցումը կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինումը կամ վերապրոֆիլավորումը կամ կոնսերվացումը կամ տեղափոխումը կամ լուծարումը կամ փակումը կամ քանդումը կամ նախագծային փոփոխությունը օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության չներկայացնելը՝
   առաջացնում է նախազգուշացում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված նախազգուշացման նշանակման օրվանից մեկամսյա ժամկետում համապատասխան փաստաթղթերի փաթեթը օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության չներկայացնելը՝
   առաջացնում է տուգանքի նշանակում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկի չափով, իսկ«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց

նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

5. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի կամ ՇՄԱԳ հաշվետվության կամ փորձաքննական եզրակացության պահանջները կամ պայմանները խախտելը կամ դրանցից շեղվելը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի՝
առաջացնում է նախազգուշացում:
6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված նախազգուշացման նշանակման օրվանից տեսչական մարմնի կողմից սահմանած ժամկետում փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի կամ փորձաքննական եզրակացության պահանջների կամ պայմանների խախտումները կամ շեղումները չվերացնելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկի չափով, իսկ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. The Draft Law on Amendments in the Law on Freedom of Information

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղեկատվության ազատության մասին» 2003 թվականի սեպտեմբերի 23-ի ՀՕ-11-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում

«1-ին մասում 2-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ» .

«բնապահպանական տեղեկություն»՝ գրավոր, տեսաձայնային, էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչով տրամադրված ցանկացած տեղեկություն, որը վերաբերում է.

ա) շրջակա միջավայրին, դրա առանձին բաղադրիչներին՝ ջրերին, մթնոլորտին, օդին, հողին, լանդշաֆտին, բնական օբյեկտներին, կենսաբազմազանությանը, ներառյալ՝ գենետիկորեն փոփոխված օրգանիզմներին և այդ բաղադրիչների միջև փոխազդեցությանը.

բ) այնպիսի գործոններին, ինչպիսիք են նյութերը, էներգիան, աղմուկը, ճառագայթումը, ինչպես նաև գործունեությունը կամ միջոցները, շրջակա միջավայրի ոլորտային համաձայնագրերը, քաղաքականությունները, իրավական ակտերը, ռազմավարությունները, պլանները և ծրագրերը, քաղաքաշինական փաստաթղթերը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունները, որոնք ազդում են կամ կարող են ազդել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, ինչպես նաև վերլուծություններ, որոնք հաշվի են առնվում շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումներ կայացնելիս, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ.

գ) մարդկանց առողջությանը և անվտանգությանը, կենսապայմաններին, մշակութային վայրերին և շինություններին այնքանով, որքանով դրանք կրում կամ կարող են կրել շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի կամ այդ բաղադրիչներով պայմանավորված գործոնների և գործունեության կամ միջոցների ազդեցությունը.

դ) շրջակա միջավայրի ոլորտում իրականացվող ծրագրերին, միջոցառումներին, այլ գործընթացների և դրանց արդյունքներին»:

2) 3-րդ պարբերությունում «տեղեկություններ» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ բնապահպանական)» բառերով,

3) 6-րդ պարբերությունում «տեղեկությունը» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ բնապահպանական)» բառերով:

Հոդված 2. «Հոդված 8.1. Էկոլոգիական տեղեկատվության ազատության սահմանափակումները

Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1. 1-ին մասով.

«1. 1 Տեղեկություն տնօրինողը կարող է մերժել բնապահպանական տեղեկության տրամադրումը, եթե այն վերաբերում է բուսական և կենդանական աշխարհի հազվագյուտ տեսակների բազմացման վայրերին»:

Հոդված 4 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հանրապետության նախագահ **Ա. Սարգսյան**

2019 թ. XXXXXX XX
Երևան
ՀՕ-XXX-Ն

3.Concept on environmental education, 2018

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(1-ին մաս)

1. Հավանություն տալ էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարությանը՝ համաձայն հավելվածի:
2.
3. ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ
4.

5. Հավելված
6. ՀՀ կառավարության
7. 2018 թ. փետրվարի 22-ի նիստի
8. N 7 արձանագրային որոշման

9. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

10. I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

11. 1. Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների՝ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացման և անապատացման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտման, ընդերքի անխնա շահագործման վերաբերյալ մակերեսային ընկալումը հետևանք են էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության: Հետևաբար նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը, հիմնված բնության և հասարակության համատեղ զարգացման սկզբունքների վրա, անհնար է առանց համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության:

12. 2. 2002 թվականին Յոհանեսբուրգում կայացած «Ռիո+10» և 2012 թվականին Ռիո-Դե Ժանեյրոյում կայացած «Ռիո+20» կայուն զարգացման գագաթնաժողովների եզրափակիչ փաստաթղթերը և 2015 թվականի ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովի 70-րդ նստաշրջանի կողմից ընդունված բանաձևը՝ «Վերափոխենք մեր աշխարհը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագիրը, հատուկ նշանակություն են տալիս էկոլոգիական կրթության (այսուհետ՝ ԷԿ) որակի բարձրացմանը:

13. 3. ԷԿ-ն անհատի կրթության, դաստիարակության և զարգացման անընդմեջ, բազմակողմանի և պարտադիր իրականացվող գործընթաց է՝ նպատակաուղղված շրջակա միջավայրի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, ինչպես նաև արժեքային համակարգի և վարքագծի կողմնորոշմանն ու էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:

14. 4. ԷԿ-ն տեսական գիտելիքից ու գիտագործնական ունակություններից զատ, նախ և առաջ, մոտեցում է, փիլիսոփայություն և գործիք՝ մարդու և բնության միջև կապը ընկալելու, հասկանալու, մեկնաբանելու և այդ ամենի հիման վրա շրջակա միջավայրի հանդեպ առանձին անհատների, մարդկանց խմբերի և ողջ հասարակության վարքագծի նոր մոդելներ մշակելու առումով:

15. 5. Էկոլոգիական մշակույթը շրջակա միջավայրի հետ մարդկության կենսագործունեության ժառանգած փորձն է, որը նպաստում է առողջ կենսակերպին, երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, կյանքի որակի բարելավմանը և էկոլոգիական անվտանգությանը: Հասարակության էկոլոգիական մշակույթի ձևավորումը պետության գերակա ուղղություններից է:

16. 6. Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտ, վավերացրել է մի շարք միջազգային բնապահպանական համաձայնագրեր (կոնվենցիաներ և դրանց արձանագրություններ), որոնցով ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում և Հայաստանի

Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներում մեծ նշանակություն է տրվում ԷԿ-ին և դաստիարակությանը:

17. 7. Անընդմեջ էկոլոգիական և կայուն զարգացման կրթությունը Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի անբաժանելի մասն է: Համաձայն «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը պարտադիր է կրթական համակարգի բոլոր մակարդակներում:

18. 8. Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) անհրաժեշտությունը և հրատապությունը պայմանավորված է երկրում ստեղծված անբարենպաստ էկոլոգիական վիճակով, որի պայմաններում դիտվում է զգալի անհամապատասխանություն տնտեսական աճի և շրջակա միջավայրի որակի միջև, որի պատճառներից մեկը հասարակական էկոլոգիական գիտակցության ու բնապահպանական վարվելաձևի խիստ ցածր մակարդակն է:

19. 9. Հայաստանի Հանրապետությունում արդի կրթական բարեփոխումների պայմաններում անհրաժեշտ է կարևորել ԷԿ և դաստիարակության ռազմավարական նշանակությունը՝ բնակչության էկոլոգիական անվտանգության և անվտանգ տնտեսության զարգացման խնդրում, որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչի ապահովում՝ մարդու և բնության փոխհարաբերություններում:

20. 10. Ռազմավարության մշակումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշման պահանջներից:

21. 11. Ռազմավարությունում ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիական կրթության և դաստիարակության առկա վիճակը, Ռազմավարության նպատակը և խնդիրները, դրանց լուծման համար անհրաժեշտ քաղաքականության մշակման հիմնավորվածությունը, առաջարկվող հիմնական ուղղությունները, նախատեսվող գործողությունները և ակնկալվող արդյունքները:

22.

23. II. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

24.

25. 12. Ռազմավարության նպատակն է.

26. 1) Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման համակարգի կատարելագործումը, այդ բնագավառում պետության, հասարակության և միջազգային կառույցների միջև ներդաշնակ և փոխշահավետ համագործակցության ընդլայնումը՝ ուղղված ԷԿ որակի բարելավմանը, հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, հասարակության էկոլոգիական գիտակցության ձևավորմանը, որը կապահովի անհատների և հասարակության գործունեության բոլոր ձևերում

պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի հանդեպ՝ բարելավելով կյանքի որակը և առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը:
27. 13. Ռազմավարության խնդիրներն են.
28. 1) Վերլուծել Հայաստանի Հանրապետությունում ԷԿ և դաստիարակության առկա վիճակը,
29. 2) Սահմանել ԷԿ և դաստիարակության ռազմավարական ուղղությունները,
30. 3) Հիմնավորել Հայաստանի Հանրապետությունում միասնական կրթական համակարգի բոլոր մակարդակներում ԷԿ և դաստիարակության տեսական և գիտագործնական կարևորությունը, դերն ու նշանակությունը,
31. 4) Որոշել ռազմավարական ուղղություններից բխող գործողությունները,
32. 5) Ապահովել էկոլոգիական անընդմեջ կրթության և դաստիարակության գործընթացի շարունակականությունն ու մեթոդական կապը կրթական համակարգի բոլոր մակարդակներում,
33. 6) Ստեղծել նախադրյալներ հանրային ծառայողների էկոլոգիական կրթությունն արդյունավետ իրականացնելու համար՝ կարևորելով նրանց էկոլոգիական գիտակցությունը և էկոլոգիական աշխարհայացքը,
34. 7) Ձևավորել համարժեք էկոլոգիական պատկերացումներ «մարդ-հասարակություն-տեխնոլոգիաներ-բնություն» համակարգում՝ նպաստելով սոցիալ-էկոլոգիական հիմնախնդիրների լուծմանը,
35. 8) Ապահովել բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկման մեխանիզմները խթանող օրենսդրական և ինստիտուցիոնալ լուծումներ,
36. 9) Սահմանել Ռազմավարությամբ նախատեսված գործողությունների ղեկավարման, մոնիթորինգի իրականացման և վերահսկման ընթացակարգերը,
37. 10) Ձևավորել բավարար բովանդակային հիմք նախապատրաստել բավարար տեսական հիմք կրթական համակարգի բոլոր մակարդակներում ԷԿ կազմակերպման, պետական միասնական ծրագրերի, չափորոշիչների և մեթոդների մշակման համար:
38.

39. III. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

40.
41. 14. Էկոլոգիական կրթությանը և դաստիարակությանն առնչվող օրենսդրությունը
42.
43. 1) ԷԿ և դաստիարակության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական ուղղվածության կոնվենցիաներով և Հայաստանի Հանրապետության կրթության և բնապահպանության ոլորտների օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով:
44. 2) Բնապահպանական ուղղվածության կոնվենցիաներով (ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (1993 թ.), ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (1997 թ.), ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (1994 թ.), «Մշակութային և

բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (1993 թ.), ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (2000 թ.), ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (2001 թ.) (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա), Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա (2004 թ.)) Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է այնպիսի միջազգային պարտավորություններ, ինչպիսիք են՝ բնապահպանական հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացումը, համապատասխան կադրերի պատրաստումը և վերապատրաստումը և այլն:

45. 3) Կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունների կատարման վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ գործընթացն անընդհատ բնույթ չի կրել և սահմանափակվել է այնպիսի միջազգային դրամաշնորհային ծրագրերի իրականացման շրջանակներում, ինչպիսիք են՝

46. ա. Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիրը (Համաշխարհային բանկ/Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ).

47. բ. Հայաստանի պահպանվող տարածքների զարգացման ծրագիրը (ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր/Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ).

48. գ. Տեխնոլոգիական կարիքների գնահատման ծրագիրը (ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր/Դանիայի տեխնոլոգիական համալսարան գործընկերություն).

49. դ. Օժանդակություն ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով ծրագիրը (Համաշխարհային բանկի ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամ).

50. ե. «Խոսրովի անտառ» պետական արգելոցում մոնիթորինգի համակարգի զարգացման, իրազեկման բարձրացման և էկոտուրիզմի զարգացման ծրագիրը (Անդրսահմանային միացյալ քարտուղարություն) և այլն:

51. 4) ԷԿ և դաստիարակությանը վերաբերող Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած առանցքային օրենքը «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է (այսուհետ՝ Օրենք): Բնապահպանական ուղղվածության Հայաստանի Հանրապետության այլ օրենսգրքերում և օրենքներում նշվում է միայն տվյալ բնագավառի վերաբերյալ հասարակությանը սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը:

52. 5) Օրենքն ընդունվել է 2001 թվականին և սահմանում է հետևյալը.

53. ա. պետական քաղաքականության սկզբունքները անընդմեջ էկոլոգիական կրթության և դաստիարակության բնագավառում,

54. բ. էկոլոգիական անընդմեջ կրթության համակարգի կառուցվածքը,

55. գ. Էկոլոգիական կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները,

դ. Հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների մասնակցության ձևերը:

6) Օրենքի կիրարկման վերլուծությունից ակնհայտ է դառնում հետևյալը.

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի նիստի N 47 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը»,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի N 1551-Ն որոշմամբ հաստատվել է «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող՝ 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը»,

գ. Օրենքի 10-րդ հոդվածով ընդհանուր շարադրված են Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները, սակայն տարանջատված չեն այս բնագավառում լիազոր մարմնի և պետական կառավարման այլ մարմինների իրավասությունները,

դ. Օրենքի 11-րդ հոդվածով նույնպես տարանջատված չեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները,

ե. Օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներում իրավասությունների տարանջատված չլինելը, պարտավորությունների կատարման տեսակետից, զգալիորեն դժվարացնում է Օրենքի կիրարկումը,

զ. Սահմանված չեն Օրենքից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունումը նախատեսող դրույթները,

է. Օրենքում բացակայում են ԷԿ և դաստիարակության համակարգում ընդգրկված կառուցվածքային միավորումներում սույն գործընթացների իրականացման մեխանիզմները:

7) ԷԿ ու դաստիարակությունը կարգավորող օրենքների շարքին են դասվում «Կրթության մասին» (1999թ.), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (2004թ.), «Նախադպրոցական կրթության մասին» (2005թ.), «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (2005թ.), «Հանրակրթության մասին» (2009թ.) Հայաստանի Հանրապետության օրենքները, որոնցում ԷԿ-ն թույլ է արտացոլված:

8) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշման՝ բնապահպանական ոլորտի զարգացման գերակայությունները հիմնվում են նաև «Էկոլոգիական կրթության, հանրային իրազեկման և հանրության մասնակցության համար համալիր միջոցառումների իրականացման աշխատանքները» հիմնադրույթի վրա (536-րդ կետ):

15. Էկոլոգիական կրթության և դաստիարակության կառավարման համակարգը

70. 1) Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն է, որի կառուցվածքային ստորաբաժանումներից հետևյալներն անմիջականորեն առնչվում են ԷԿ և դաստիարակության խնդիրների լուծմանը՝
71. ա. հանրակրթության վարչությունը,
72. բ. մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչությունը,
73. գ. նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությունը,
74. դ. բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությունը,
75. ե. հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությունը,
76. զ. լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը:
77. 2) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգում գործում են նաև հետևյալ կառույցները.
78. ա. Կրթության ազգային ինստիտուտը, որը մշակում է կրթության կառավարման համակարգի ռազմավարությունը և բարեփոխումների իրականացման մեթոդաբանությունը, կրթության բովանդակության բարեփոխումների հիմնադրույթները և դրանց համապատասխան՝ պետական կրթական չափորոշիչները, ուսումնական հաստատությունների հենքային և օրինակելի ուսումնական պլանները, հիմնական և լրացուցիչ հանրակրթական և մասնագիտական կրթության պետական ծրագրերը,
79. բ. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, որի գործունեության առարկան Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման ու դրա շարունակականության ապահովումն է,
80. գ. Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային կենտրոնը, որի գործունեության առարկան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և մասնագիտական ուսուցման, այդ թվում՝ մեծահասակների ուսումնառության համակարգի արդյունավետության բարձրացումն է, ինչպես նաև հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրության ու զարգացման, մրցունակության և սոցիալական համախմբվածության ապահովումը:
81. 3) ԷԿ և դաստիարակության կառավարման բնագավառում առանձնահատուկ դերակատարում ունի Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, որը համաձայն իր կանոնադրական գործառույթների, իրականացնում է էկոլոգիական գիտության, կրթության և իրազեկման միասնական քաղաքականություն և լիազոր մարմնի հետ համատեղ էկոլոգիական գիտության, կրթության և իրազեկման ռազմավարության հիմնական ուղղությունների մշակում: ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության կազմում ընդգրկված է Տեղեկատվության և էկոկրթության բաժինը:

82. 4) Կառավարման կարևոր օղակներ են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք տեղական մակարդակում իրականացնում են ԷԿ և դաստիարակության հետ կապված գործառույթներ:
83. 5) Հատուկ իրավասություններով է օժտված նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի օգոստոսի 3-ի N 464 որոշմամբ ստեղծված ԷԿ միջգերատեսչական հանձնաժողովը, որի կարևոր գործառույթը ԷԿ համակարգի սուբյեկտների փոխհամագործակցության ապահովումն է:
84. 6) ԷԿ և դաստիարակության կառավարման համակարգի վերլուծությունից ակնհայտ է դառնում հետևյալը.
85. ա. պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհամագործակցության անբավարար լինելը,
86. բ. ԷԿ և դաստիարակության գործընթացում պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հստակեցման անհրաժեշտությունը,
87. գ. Էկ միջգերատեսչական հանձնաժողովի ոչ արդյունավետ աշխատանքը:
88.
89. 16. Հանրակրթական մակարդակում էկոլոգիական կրթության առկա վիճակի վերլուծություն
90.
91. 1) Հանրակրթության մակարդակում կայուն զարգացման սկզբունքներին համահունչ ԷԿ և դաստիարակության իրականացման արդյունավետությունը և համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին ստուգելու լավագույն միջոց են հանդիսանում հանրակրթության բոլոր 3 աստիճանների (տարրական կրթության, հիմնական կրթության, միջնակարգ կրթության) բովանդակությանը ներկայացվող նվազագույն չափորոշչային պահանջների, առարկայական ծրագրերի և դասագրքերի հետազոտությունը: Սույն վերլուծությունն իրականացնելու համար հետազոտվել են՝ «Հանրակրթության պետական չափորոշիչը», հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշմամբ, էկոլոգիական և կայուն զարգացման կրթության հետ առնչվող բնագիտական և հասարակագիտական առարկաների տարբեր դասարանների ծրագրերը և դասագրքերը:
92. 2) Նախադպրոցական կրթության բնագավառում շրջակա միջավայրը ճանաչելու, ընկալելու խնդիրները նախատեսված են վերջին տարիներին շրջանառության մեջ գտնվող ուսումնական ծրագրերում, որոնք ուղղված են նախադպրոցական կրթության մասնագետներին աջակցություն ցուցաբերելուն: Դրանք ներառում են ինչպես ուսումնական նյութեր, այնպես էլ մեթոդական խորհուրդներ՝ բնապահպանական դաստիարակությանը նպաստող միջավայր ձևավորելու, պարապմունքները վարելու մեթոդների վերաբերյալ:
93. 3) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի մասնագետների կողմից մշակված «Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի կրթական համալիր

ծրագիր», «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր» փաստաթղթերում ԷԿ իրականացման կարևորումը և ընդգրկումը նպաստեց ոլորտում էական ձեռքբերումների և բնապահպանական կրթության դերի բարձրացմանը: Սակայն դաստիարակների կողմից բնապահպանական դաստիարակության համար ընտրված ուսումնական նյութերի, աշխատանքի մեթոդների ճիշտ ընտրությունը լուրջ հիմնախնդիր է և ոչ բոլոր դեպքերում են համապատասխանում մշակված չափանիշներին:

94. 4) Արդիական խնդիր է դաստիարակների վերապատրաստման իրականացումը, ինչպես նաև ԷԿ և դաստիարակության համար անհրաժեշտ օժանդակ նյութերի՝ տեսաֆիլմերի, խաղերի, պլակատների ստեղծումը:

95. 5) Կրթության բացթողումների շարքում մտահոգիչ է կրթության չափից ավելի ակադեմիականությունը և ակադեմիական տեսական նյութի մեծ ծավալը ուսումնական նյութերի բովանդակության կազմում:

96. 6) Մի շարք առարկաների շրջանակներում հանրակրթական ծրագրերը ձևավորում են բավականաչափ անհրաժեշտ գիտելիքների բազա՝ ապահովելով ԷԿ զարգացումը:

97. 7) Հանրակրթության չափորոշիչում ներկայացված «Շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները» բաժինը լայն հնարավորություն է տալիս ծրագրեր, ուսումնական նյութեր ստեղծող մասնագետներին և ուսուցիչներին բացահայտել իրենց ողջ ստեղծագործական կարողությունները ԷԿ խնդիրները լուծելու համար:

98. 8) Հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի շրջանակներում ներկայացված են ԷԿ վերաբերյալ մի շարք ընտրովի դասընթացներ («Էկոլոգիա», «Բնապահպանություն», «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում», «Ֆերմերային գործ», «Կյանքի հմտություններ», «Բնօգտագործում և բնապահպանություն», «Էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ»), որոնք երաշխավորված են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից և կարող են դպրոցների ընտրությամբ ներդրվել ԷԿ իրականացնելու նպատակով:

99. 9) ԷԿ և դաստիարակության բնագավառներում զգալի դեր ունեն հասարակական կազմակերպությունները և նրանց հետ համագործակցող մասնագետները, ովքեր ստեղծում են ուսումնական ծրագրեր, ձեռնարկներ: Այս ծրագրերի շրջանակներում ստեղծվում են նաև ուսուցիչների վերապատրաստման մեթոդական ձեռնարկներ, իրականացվում են դասընթացներ դպրոցականների ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար:

100. 10) ԷԿ և դաստիարակության իրականացման բացթողումներն են.

101. ա. հանրակրթության համակարգի (տարրական, հիմնական, միջնակարգ կրթություն) շրջանակներում ԷԿ չափորոշչային պահանջների համալիր ծրագրի բացակայությունը,

102. բ. հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում ԷԿ-ն իրականացվում է տարբեր առարկաների ծրագրերում ոչ թե ինտեգրված ձևով, այլ կցված տեսքով,

103. գ. առարկայական ծրագրերում ԷԿ վերաբերող բաժինները ներկայացված են թերի, առանց հաշվի առնելու ներառարկայական և միջառարկայական կապերը,
104. դ. ավագ դպրոցը չունի ԷԿ չափորոշիչներ և ծրագրեր: Եղած ծրագրերը թերի են և հաճախ կրկնում են հիմնական դպրոցի ծրագրերը,
105. ե. ԷԿ բնագավառում հանրակրթական դպրոցի ուսուցիչների մասնագիտական զարգացման անբավարար մակարդակը,
106. զ. անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով ԷԿ իրականացման ժամանակակից մեթոդները, ձևերը, մոտեցումները հիմնականում չեն կիրառվում, առարկայական ծրագրերը հագեցած են տեսական նյութերով, գործնական, նախագծային, հետազոտական աշխատանքների համար ուսումնական ծրագրերում հատկացված ժամաքանակը խիստ սահմանափակ է,
107. է. ԷԿ խիստ անհրաժեշտ արտադպրոցական բաղադրիչը հիմնականում բացակայում է՝ պետական աջակցության բացակայության պատճառով,
108. ը. Ինտեգրված ուսումնական բովանդակության ձևաչափերին համապատասխան բացակայում են ԷԿ գծով մասնագիտական զարգացման վերապատրաստման դասընթացների ծրագրերը,
109. թ. ԷԿ վերապատրաստման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական գրականությունը բավարար չէ ուսուցիչների և ուսուցիչներ վերապատրաստողների համար,
110. ժ. բացակայում են ուսումնական գրականությունը և դիդակտիկ նյութերը սովորողների տարբեր տարիքային խմբերի համար,
111. ժա. բացակայում է արդյունավետ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության և բնապահպանության նախարարությունների միջև՝ ԷԿ իրականացման գործում:
112.
113. 17. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական մակարդակում էկոլոգիական կրթության առկա վիճակի վերլուծություն
114.
115. 1) Միջին և նախնական մասնագիտական կրթության իրականացման համար հիմք է հանդիսանում «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (2005 թ.):
116. 2) Հանրապետությունում իրականացվում է միջին մասնագիտական կրթություն 68 պետական քոլեջներում և նախնական մասնագիտական կրթություն՝ 25 պետական արհեստագործական ուսումնարաններում:
117. 3) Յուրաքանչյուր մասնագիտական պետական կրթական չափորոշչում ներառված է «Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ» առարկան, որը ուսուցանվում է 36 ժամյա դասընթացի միջոցով:
118. 4) «Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ» առարկայի ուսումնական առարկայական ծրագրերը մշակվում են ուսումնական հաստատությունների կողմից, սակայն նրանք չեն բավարարում ներկայիս պահանջները: ԷԿ ծրագրերի վերաբերյալ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առկա էկոլոգիական ուղղվածության թեմաները բավարար չեն ներկայացված ուսումնական

ծրագրերում, որոնք կարևոր են և պարտադիր սովորողի մասնագիտական կրթությունն ամբողջացնելու համար:

119. 5) Հայաստանի Հանրապետությունում միջին և նախնական մասնագիտական կրթության հաստատությունների ԷԿ դասավանդող դասավանդողները կարիք ունեն լրացուցիչ մասնագիտական զարգացման դասընթացների:

120. 6) Գրեթե բացակայում են դասախոսների համար անհրաժեշտ հայալեզու ուսումնամեթոդական ձեռնարկները, իսկ սովորողների համար՝ ուսումնական գրականությունը:

121.

122. 18. Բարձրագույն և հետբուհական կրթական մակարդակում էկոլոգիական կրթության առկա վիճակի վերլուծություն

123.

124. 1) Բարձրագույն և հետբուհական կրթական մակարդակում ԷԿ վիճակն առնչվում է ԲՈՒՀ-երում բնապահպանական կրթության ոլորտում իրականացվող գործունեությանը, կարողություններին, կարիքներին, մասնագիտական գրականությանը, համապատասխան նախարարությունների հետ համագործակցությանը, ինչպես նաև Ռիոյի կոնվենցիաների դրույթների վերաբերյալ իրազեկվածությանն ու համապատասխան թեմաների ներառմանն ուսումնական ծրագրերում:

125. 2) Բարձրագույն և հետբուհական կրթական համակարգում ԷԿ-ն ըստ էության նույնականացվում է բնական պաշարների կառավարման հետ և իրականացվում է հիմնականում բակալավրիատում: ԲՈՒՀ-երի ուսումնական գործընթացներում «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և կրթության ոլորտին առնչվող այլ կարևոր ռազմավարությունների դրույթների արտացոլման աստիճանը միջինից բարձր է, սակայն մտահոգիչ է, որ խիստ ցածր է ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (UNESCO) «Կրթություն հանուն կայուն զարգացման» գործողությունների գլոբալ ծրագրի մասով իրազեկվածության աստիճանը, որի կարևորագույն բաղադրիչը էկոլոգիական կրթությունն է:

126. 3) Համաձայն փորձագիտական վերլուծության արդյունքների՝ Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երում ԷԿ իրականացման մակարդակը բավարար է, ուսումնական ծրագրերում ներառված են բնապահպանական առանցքային խնդիրները, որոնք հիմնականում առնչվում են Ռիոյի կոնվենցիաների դրույթներին: Ընդհանուր առմամբ դասավանդվում է 178 առարկա, որոնք առնչվում են բնապահպանությանը, էկոլոգիային և կայուն զարգացմանը, սակայն դրանց դասավանդումն իրականացվում է ոչ թե համընդգրկուն էկոլոգիական կրթության համատեքստում, այլ ըստ տնտեսական գործունեության այն տեսակների, որոնք էական ազդեցություն ունեն շրջակա միջավայրի և, ըստ երկրում առկա փաստացի և պոտենցիալ, բնապահպանական խնդիրների վրա:

127. 4) ՈՒսումնական գործընթացում անբավարար է ԷԿ բնորոշ հետևյալ բաղադրիչների կիրառությունը՝

128. ա. միջգիտաճյուղային մոտեցումն ու մեթոդը,

129. բ. բնական և տեխնածին աղետների ռիսկերի կառավարումն ու կանխարգելումը,
130. գ. էկոլոգիային և բնապահպանությանն առնչվող միջազգային կոնվենցիաներին ու ազգային օրենսդրության մատուցումը,
131. դ. հարմարվողականության և մեղմման քաղաքականություններին և դրանց իրականացման միջոցառումներին,
132. ե. կայուն զարգացմանը, էկոլոգիական մշակույթին, գիտելիքներին և պատկերացումներին վերաբերող հարցերը:
133. 5) Էկոլոգիական և բնապահպանական խնդիրների վերաբերյալ գիտական և ուսումնամեթոդական գրականության վերլուծությունը ցույց է տվել, որ ԲՈՒՀ-երը էկոլոգիայի, բնապահպանության, բնօգտագործման և կայուն զարգացման հարցերը դասավանդելու համար օգտագործում են իրենց հաստատության ուղղվածությանը վերաբերող դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և այլ աղբյուրներ: Ընդ որում՝ բարձրագույն և հետբուհական կրթական համակարգում բացակայում է ԷԿ կազմակերպման միասնական և համալիր պետական ծրագիրը, ուսուցման մեթոդն ու ուսումնամեթոդական բազան: ՈՒսումնական նյութերի շրջանակից հիմնականում դուրս են մնացել արդիական մասնագիտական գրականությունը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP), ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP), ՄԱԿ-ի այլ կառույցների հրապարակումները, Հայաստանի Հանրապետության կայուն զարգացմանը, շրջակա միջավայրի վիճակին, կոնվենցիաների վերաբերյալ հրապարակվող ազգային զեկույցները: ՈՒսանողների և դասախոսական անձնակազմի համար լուրջ խնդիր է հայերենով առկա գրականության մասնագիտական որակն ու սահմանափակ մատչելիությունը:
134. 6) Լրջագույն խնդիր է ոլորտում գիտական հետազոտությունների և հրատարակությունների խիստ ցածր մակարդակը, էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում հետազոտություններ ներառող գիտական թեմաների ֆինանսավորումը:
135. 7) Էկոլոգիական կրթության զարգացմանը խոչընդոտող գործոնների բացակայության մասին Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երի շեշտադրումը վկայում է այս կրթության վերաբերյալ սահմանափակ պատկերացումների մասին, ինչն էլ որոշակիորեն մեկ անգամ ևս փաստում է Ռազմավարության անհրաժեշտությունը:
136.
137. 19. Լրացուցիչ և շարունակական կրթության առկա վիճակի վերլուծություն
138.
139. 1) Էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման և Էկոլոգիական վարքագծային մշակույթ արմատավորելու գործընթացում առանցքային դեր ունեն լրացուցիչ կրթական դասընթացները, որոնց հիմնական նպատակը հասարակության կրթական պահանջմունքի բավարարումն է,կատարելագործելով գիտելիքները, կարողությունները,հմտությունները և մարտահրավերներին դիմակայելու կարողության զարգացումը:

140. 2) Մասնագիտական որակավորման շարունակական բարձրացումը կարևորում են Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից 1976 թվականին ընդունված «Մեծահասակների կրթության զարգացման մասին» հանձնարարականը, ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (UNESCO) կողմից 1989 թվականին ընդունված «Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին» կոնվենցիան, ինչպես նաև 2001 թվականին Պրահայում ընդունված Բոլոնիայի հռչակագիրը:

141. 3) «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով «լրացուցիչ կրթությունը» սահմանում է, որ լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են անձի ամբողջ կյանքի ընթացքում մասնագիտական և անձնական կրթական պահանջմունքները բավարարելու, ինչպես նաև գիտելիքները, կարողությունները, հմտությունները կատարելագործելու և արդիականացնելու նպատակով:

142. 4) Լրացուցիչ կրթական ծրագրեր են իրականացնում ինչպես Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները, բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակները, հասարակական կազմակերպությունները, ուսուցման մասնավոր կենտրոնները:

143. 5) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից կատարվել է մեծածավալ աշխատանք «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատագրված դրույթները և նորմերը քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում ներառելու նպատակով: Վերապատրաստման ծրագրերի շարքում առկա է «Շրջակա միջավայր» վերապատրաստման ծրագիրը: Ընդ որում՝ այս թեմայով վերապատրաստում անցած քաղաքացիական ծառայողների թվաքանակը բավականին ցածր է:

144. 6) Տեղական ինքնակառավարման մարմիններում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերը ներառում են միայն համայնքների ղեկավարների լիազորությունների, համայնքային ծառայության, տեղեկատվության ազատության, հակակոռուպցիոն, ինչպես նաև կառավարչական հմտությունների հետ կապված թեմաներ: Բնապահպանական հիմնախնդիրների և դրանց լուծմանն ուղղված համայնքային ծրագրերի մշակման վերաբերյալ որոշակի անդրադարձ է կատարված միայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրում (սոցիալական հարցերի բնագավառ):

145. 7) Լրացուցիչ և շարունակական կրթության ապահովման առումով առկա հիմնախնդիրներ են՝

146. ա. էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման համար անհրաժեշտ նյութական, կազմակերպչական, ֆինանսական անբավարար միջոցները,

147. բ. պետության կայուն զարգացման համատեքստում՝ բնական ռեսուրսների խնայողական օգտագործման և ոլորտում առկա խնդիրների բնապահպանական

լուծումների առաջնայնության դիտարկման ցածր մակարդակը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

148. գ. բնապահպանական հիմնահարցերի արդյունավետ իրազեկման համար մասնագետների պակասը,

149. դ. թիրախային խմբերի համար էկոլոգիական թեմաներով վերապատրաստման ծրագրերի, ուսումնական նյութերի և ձեռնարկների անբավարար լինելը:

150.

151. 20. Ոչ ֆորմալ և ինֆորմալ էկոլոգիական կրթության առկա վիճակի վերլուծությունը

152.

153. 1) «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածում սահմանվում են «ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում)» և «ինֆորմալ կրթություն» հասկացությունները՝ որպես լրացուցիչ կրթության տեսակներ և հիմնականում իրականացվում է գիտելիքի փոխանցման միջոցով:

154. 2) Բազմաթիվ գիտական հետազոտություններ վկայում են, որ պարզապես գիտելիք փոխանցելն արդյունավետ չէ, քանի որ դա չի բերում վարքագծի և վերաբերմունքի փոփոխության, քանի որ ԷԿ-ն առանց գործնական, մասնակցային, քաղաքացիական բաղադրիչների արդյունավետ չէ:

155. 3) Թույլ է կապը մարդկանց աշխատանքային գործունեության և էկոլոգիական մարտահրավերների միջև, աշխատավայրերում ԷԿ դերն անտեսված է, էկոլոգիական գրագիտությունը խրախուսող մեխանիզմներ չկան, աշխատանքի ընդունման, աշխատակիցների խրախուսման ժամանակ հաշվի չեն առնվում նրանց էկոլոգիական կրթվածության աստիճանը:

156. 4) Կարևոր դեր ունեն նաև հասարակական կազմակերպությունները, մասնագիտական խմբերը, անհատները, որոնք առանձին հարցերի շուրջ ստեղծում են ինֆորմալ հարթակներ և բարձրացնում ԷԿ մակարդակը: Գործում է «Բնապահպանական կրթության ցանց», որը քաղաքացիական հասարակության, պետական, կրթական և միջազգային ավելի քան 40 կառույցների միություն է: Կառույցն իրականացնում է քննարկումներ, հետազոտություններ, հայտարարում է դրամաշնորհային մրցույթներ:

157. 5) Համացանցը և օնլայն հարթակները բավարար չափով չեն օգտագործվում ԷԿ իրականացնելու նպատակով: Չկան հայերեն լեզվով էլեկտրոնային դասընթացներ, ուսումնական ռեսուրսներ հասարակության լայն խավերի համար:

158. 6) Միջազգային և հասարակական կազմակերպությունների ջանքերով ստեղծվել են արտադպրոցական ուսումնական կենտրոններ, սակայն դրանց թիվը բավարար չէ: Խնդիր է նաև այն, որ այդ կենտրոնները գերազանցապես ծառայում են դպրոցականներին: Սակավաթիվ են էկոլոգիական թեմաներով ամառային ճամբարները: Մինչդեռ ճամբարները ԷԿ գործնական մեթոդներով իրականացնելու արդյունավետ հարթակներ են:

159. 7) Բացակայում են կրթության բոլոր օղակների միջև համագործակցության ոչ ֆորմալ հարթակները, ինչը սահմանափակում է միմյանցից սովորելու և լավագույն փորձը կրթության տարբեր մակարդակներում տարածելու հնարավորությունը:

160. 8) Միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից մշակվել են ԷԿ ձեռնարկներ, որոնցում կարևորվում են ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, սակայն չկան ձեռնարկներ դասախոսների, մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետների և մարդկային կապիտալի կառավարման ոլորտի այլ մասնագետների վերապատրաստման համար:

161. 9) ԷԿ-ն անտեսված է շատ ընտանիքներում, բակերում, համայնքներում: Մինչդեռ հասարակության անդամները հենց ընտանիքում են անցկացնում իրենց ժամանակի մեծ մասը: Ծնողավարական կրթության վատթար վիճակի համատեքստում մեծապես տուժում է ԷԿ իրականացումն ընտանիքում: Ինֆորմալ կրթության առաջնային միջավայր են համարվում բակերն ու համայնքները, որտեղ նույնպես էկոլոգիական խնդիրներն անտեսված են: Չկան ընտանիքներում, բակերում, համայնքներում ԷԿ-ն խրախուսող մեխանիզմները:

162.

163. 21. Հանրային իրազեկման համատեքստում Էկոլոգիական կրթության առկա վիճակի վերլուծություն

164.

165. 1) Բնապահպանական տեղեկատվություն ստանալու Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները և տեղեկատվության տրամադրման կարգը սահմանվում են «Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով», 1998 թ. հունիսի 25-ին ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից ընդունված և 2001 թ. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիայով և ՀՀ քրեական օրենսգրքով:

166. 2) Հայաստանի Հանրապետությունում գործող զանգվածային լրատվության միջոցներում (այսուհետ՝ ԶԼՄ) բնապահպանական խնդիրների լուսաբանման մակարդակը բավարար չէ, չնայած վերջին տարիներին բնապահպանական ուղղվածության հասարակական կազմակերպությունների ակտիվացման շոշափելի աճին, ինչը բավարար չափով լուսաբանվում է: Հրապարակումները հիմնականում մակերեսային են, ինչն առավելապես պայմանավորված է բնապահպանական խնդիրների՝ անհատի կենսագործունեության վրա անմիջական ազդեցություն ունենալու վերաբերյալ անբավարար գիտակցման հետևանքով բնապահպանական տեղեկատվության համեմատաբար ցածր պահանջարկով և ոլորտը լուսաբանող լրագրողների բնապահպանական գիտելիքների պակասով:

167. 3) Հասարակության շրջանում բնապահպանական տեղեկատվության հանդեպ ցածր պահանջարկի պատճառը բնապահպանական խնդիրների կարևորության, դրանց հետևանքների վտանգավորության մասին իրազեկվածության անբավարար մակարդակն է:

168. 4) ՈՒսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության բնակիչները բնապահպանական խնդիրներով հետաքրքրվում են միայն այն

ժամանակ, երբ այն վերածվում է սոցիալական խնդրի, կամ առնչվում է անմիջապես իրենց առօրյա կենսագործունեությանը:

169. 5) Շրջակա միջավայրի վերաբերյալ բնակչության ցածր իրազեկվածության պատճառներից է համապատասխան տեղեկատվությունը տնօրինող պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից պրոակտիվ տեղեկատվություն տարածելու գործընթացը կարգավորող օրենսդրության անկատարությունը և սահմանված դրույթների կատարման ընթացքի վերահսկման մեխանիզմների բացակայությունը:

170. 6) Լրատվամիջոցները բնապահպանական թեմաներով նյութեր են հրապարակում գերազանցապես լրատվական առիթի դեպքում (արտակարգ իրավիճակներ, հանքարդյունաբերական ծրագրերի դեմ հասարակական կազմակերպությունների բարձրացրած բողոք, պաշտոնական տեղեկատվություն): Ընդ որում՝ արտակարգ իրավիճակների (օրինակ՝ անտառային հրդեհ, պայթյուն քիմիական գործարանում) առկայության դեպքում շեշտը դրվում է օպերատիվ լրատվության վրա, իսկ կատարվածի բնապահպանական հետևանքների մասին լուսաբանումն անհամեմատ ավելի քիչ է, հիմնականում՝ ոչ խորքային, հիմնված բնապահպան-ակտիվիստների հայտարարությունների և պաշտոնական մեկնաբանությունների վրա, առանց հետաքննական մեխանիզմների, կրում է մեկանգամյա բնույթ և հետևողական չէ:

171. 7) Հայաստանում գործող հիմնական ԶԼՄ-ների մոնիթորինգը ցույց է տալիս.

172. ա. հեռուստաալիքներից ոչ մեկը չունի բնապահպանական թեմաներով մասնագիտացված հաղորդում, առանձին անդրադարձեր են կատարվում լրատվական թողարկումների ժամանակ, կամ այլ ծրագրերի շրջանակում՝ բոլոր դեպքերում միայն տեղեկատվական առիթի դեպքում, հազվադեպ են վերլուծական, հետաքննական հրապարակումները, ուսուցողական մոտեցումները,

173. բ. ինտերնետային կայքերը բնապահպանական տեղեկատվության մատուցման հարցում առաջատար են, սակայն մեծ մասը սահմանափակվում է բնապահպանական խնդիրների օպերատիվ լուսաբանմամբ, հետաքննական և վերլուծական հրապարակումները սակավաթիվ են: Գործում է բնապահպանական ուղղվածության երկու կայք՝ ecolur.org և econews.am,

174. գ. Հանրային ռադիոյում եթեր է հեռարձակվում միակ մասնագիտացված բնապահպանական հաղորդաշարը՝ «Էկոսֆերան», որը շաբաթական երեք կարճ (13 րոպե տևողությամբ) թողարկումների միջոցով չի կարող էական արդյունք ապահովել բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկման գործընթացում,

175. դ. սոցիալական ցանցերը մեծ դեր ունեն հասարակական կարծիքի ձևավորման մեջ, սակայն այս հարթակում առավել ակտիվ են հասարակական կազմակերպությունները, սոցիալական հարթակի ներուժը բավարար չափով չեն օգտագործում պետական մարմինները և տնտեսվարողները, ինչը սոցիալական ցանցերը դարձնում է հանրային կարծիքի ձևավորման առավելապես միակողմանի տեղեկատվության աղբյուր,

176. ե. հասարակական կազմակերպությունների ներդրումը (սեմինարներ, բողոքի ակցիաներ, հրապարակումներ) ամենամեծն է վերջին տարիներին գրանցված հանրության իրազեկման մակարդակի բարձրացման գործում: Այնուամենայնիվ, հասարակական կազմակերպությունները ոչ բոլոր դեպքերում են հասարակական հնչեղություն տալիս բնապահպանական առկա խնդիրներին,

177. զ. լրագրության բաժիններ ունեցող հիմնական բուհերում կամ բացակայում են բնապահպանական լրագրությանն առնչվող դասընթացները, կամ առաջարկվում են որպես կամընտրական դասընթաց, սակայն դասընթացները բավականաչափ արդյունավետ չեն՝ դասագրքերի և որակավորված դասախոսների բացակայության պատճառով:

178. 8) Չնայած վերջին տարիներին նկատվում է բնապահպանական խնդիրների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ այն բավարար չէ, ինչը պայմանավորված է հանրության բնապահպանական կրթության անբավարար մակարդակով և բնապահպանական մշակույթի բացակայությամբ, որի հետևանքով, սոցիալ-տնտեսական թեմաների համեմատ, ցածր է բնապահպանական տեղեկատվության հանդեպ պահանջարկը, անբավարար են բնապահպանական խնդիրների նկատմամբ ԶԼՄ-ների հետաքրքրությունը և լրագրողների մասնագիտական գիտելիքները, պասիվ և ոչ արդյունավետ են օգտագործվում հաղորդակցային միջոցները պետական մարմինների և ձեռնարկատերերի կողմից, հանրության շրջանում առկա է անվստահություն պետական մարմինների և տնտեսվարողների հանդեպ, անբավարար են ձեռնարկատերերի առավել թափանցիկ գործունեությունն ապահովող իրավական մեխանիզմները:

179.

180. IV. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

181.

182. 22. Սույն Ռազմավարությունը պետք է իրականացվի կրթության և շրջակա միջավայրի պահպանման ոլորտի շահառուների լայն ներգրավմամբ և աջակցությամբ, այդ թվում՝ պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, ինչպես նաև կրթության և շրջակա միջավայրի պահպանման ոլորտում ծրագրեր ֆինանսավորող պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Ռազմավարությունը պահանջում է բոլոր շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության կողմից ակտիվ մասնակցություն:

183. 23. Հիմք ընդունելով սույն Ռազմավարության 12-րդ և 13-րդ կետերում նշված նպատակն ու խնդիրները՝ նախանշվել են Հայաստանի Հանրապետության ԷԿ և դաստիարակության հետևյալ ռազմավարական ուղղությունները.

184. 1) ԷԿ և դաստիարակությանն առնչվող օրենսդրության և կառավարման համակարգի կատարելագործում,

185. 2) հանրակրթության բնագավառում բնապահպանական և կրթական քաղաքականության ներդաշնակ զարգացման ապահովում,
186. 3) նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառի համալրումը Կայուն զարգացման սկզբունքների վրա հիմնված ԷԿ թեմատիկ դասընթացներով և արհեստավարժ ուսուցիչներով,
187. 4) ԷԿ համակարգում բարձրագույն և հետբուհական կրթական մակարդակի համապատասխանեցումը կայուն զարգացման սկզբունքների էկոլոգիական բաղադրիչին,
188. 5) լրացուցիչ և շարունակական ԷԿ համակարգի զարգացում,
189. 6) բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացման քաղաքականության կատարելագործում,
190. 7) ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության հնարավորությունների օգտագործումը հասարակության մոտ բնապահպանական մշակույթի և գիտակցության բարձրացման նպատակով:
191.
192. 24. ԷԿ և դաստիարակությանն առնչվող օրենսդրության և կառավարման համակարգի կատարելագործումը
193.
194. 1) Էկ և դաստիարակությանն առնչվող օրենսդրության կատարելագործումը պայմանավորված է «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակմամբ, որոնք թույլ կտան, ինչպես կրթության ոլորտում, այնպես էլ հասարակության իրազեկության բարձրացման գործընթացներում ապահովել պետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների փոխհամաձայնեցված և ներդաշնակ գործունեությունը: Այդ տեսակետից առաջնահերթ նշանակություն ունի հետևյալ խնդիրների լուծումը.
195. ա. Էկ և դաստիարակության լիազոր մարմնի և պետական կառավարման մյուս մարմինների իրավասությունների տարանջատումը,
196. բ. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների տարանջատումը,
197. գ. նշված օրենքներից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունման անհրաժեշտությանը վերաբերող դրույթների ամրագրումը,
198. դ. նշված օրենքներում ԷԿ և դաստիարակության գործընթացների իրականացման մեխանիզմների վերաբերյալ դրույթների ամրագրումը:
199. 2) Էկ և դաստիարակության կառավարման համակարգի կատարելագործումը պայմանավորված է պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև արդյունավետ փոխհամագործակցության և ԷԿ միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության ակտիվացման անհրաժեշտությամբ: Այդ տեսակետից առաջնահերթ նշանակություն ունեն հետևյալ հարցերը.
200. ա. ԷԿ միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգի մշակումը,

201. բ. ԷԿ և դաստիարակության վերաբերյալ լիազոր մարմնի և տարածքային կառավարման մարմինների միջև համագործակցության հուշագրերի մշակումը,

202. գ. լիազոր մարմնի կողմից ԷԿ և դաստիարակության գործընթացների մոնիթորինգի իրականացման և վերահսկման ընթացակարգերի մշակումը:

Curricula of the Academy of Justice, 2018

http://justiceacademy.am/assets/attachments/2019.dataxazneri.tarekan.tsragir.pdf?fbclid=IwAR1DWSs2OWugGbYvIAlbSUbTZ7cwlqVgVZXGdCH2wM87XMSACaRyu1iYmq0